



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎԻԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դոկտոր ԱՐՄԻՆԵ ԻՇԽԱՆՅԱՆ

Լոնդոնի տնտեսագիտության եւ
քաղաքական գիտությունների դպրոց
Սոցիալական քաղաքականության բաժին

Էվելինա Գյուլիանդանյանի, Սոնա Մանուկյանի,
Արփի Մանուկյանի հետ համատեղ
«Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների եւ
խորհրդատվության կենտրոն ՀԿ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎԻԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դոկտոր ԱՐՄԻՆԵ ԻՇԽԱՆՅԱՆ

Լոնդոնի տնտեսագիտության եւ
քաղաքական գիտությունների դպրոց
Սոցիալական քաղաքականության բաժին

Էվելինա Գյուլիսանդանյանի, Սոնա Մանուսյանի,
Արփի Մանուսյանի հետ համատեղ
«Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների եւ
խորհրդատվության կենտրոն ՀԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտագիտության խոսք	3
Համառոտ ակնարկ	4
Ներածություն	8
Նախապատմությունը եւ համատեքստը	18
Քաղաքացիական նախաձեռնություններ	26
Հանքարդյունաբերության աճը եւ քաղաքացիական հասարակության ակտիվիզմի նոր ալիքի առաջացումը Հայաստանում	40
Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը	54
Քաղաքացիական նախաձեռնությունների ազդեցությունը. նվաճումներ եւ մարտահրավերներ	64
Հանքարդյունաբերության գլոբալ պատկերը	74
Եզրակացություն	80
Հավելված	84
Հղումներ	90

Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը եւ
ընապահականական ակտիվիզմը Հայաստանում

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Այս հետազոտությունը հնարավոր դարձավ շնորհիվ Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի հատկացրած դրամաշնորհի: Ես շնորհակալ եմ պարոն Մարտին Եսայանին, դոկտոր Ռազմիկ Փանոսյանին և տիկին Աստրիկ Չամբերթենին՝ օժանդակության համար: Ցանկանում եմ նաեւ շնորհակալություն հայտնել Հիմնադրամի աշխատակից տիկին Իզաբել Մոուրային կազմակերպական եւ վարչական հարցերում ցուցաբեցած օգնության համար, ինչպես նաեւ Լոնդոնի տնտեսագիտության դպրոցի Հետազոտական բաժնի աշխատակիցներ՝ Մայքլ Օլիվերին եւ Միլենա Վասիլեային՝ իրենց աջակցության համար:

Ես շատ շնորհակալ եմ Հայաստանում գտնվող «Սոցիոսկոպ» ՀԿ-ի հետազոտական խմբին, մասնավորապես՝ Էվելինա Գյուլխանդանյանին, Արփի Մանուկյանին եւ Արուս Հարությունյանին ֆոկուս խմբերը վարելու եւ լրատվամիջոցների վերլուծության համար:

Ցանկանում եմ նաեւ շնորհակալություն հայտնել Լենա Նազարյանին Հակակոռուպցիոն կենտրոնից եւ Արթուր Գիրգորյանին՝ «Թեղուտի քաղաքացիական պաշտպանության նախաձեռնությունից», հանք-արդյունաբերության մասին գլխում ունեցած իրենց ներդրման համար:

Չեկույցը լույս ընծայելու գործում փորձ եմ արել ներառել տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպություններին: Եւ շատ շնորհակալ եմ Նորա Գալֆայանին, «Ուտոպիանա.ամ մշակութային-ստեղծագործական» ՀԿ-ից, աշխատանքի դիզայնի համար ու «Քաղաքի գրատուն» տպագրատանը՝ զեկույցը տպագրելու համար: «Քաղաքի գրատունը» սոցիալական ձեռնարկություն է՝ կապված Գյումրիի «Ասպարեզ լրագրողների ակումբ» ՀԿ-ի հետ:

Վերջապես, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ում հետ հարցազրույց ենք արել, այդ թվում՝ ֆոկուս խմբի մասնակիցներին՝ մեզ ժամանակ տրամադրելու եւ իրենց կարծիքները հայտնելու համար: Հետազոտությունը հնարավոր չէր լինի առանց նրանց՝ ժամանակ տրամադրելու ու կարծիքները հայտնելու կամեցողության: Հույս ունեմ, որ զեկույցը կհետաքրքրի նրանց:

Անձամբ միայն ես եմ պատասխանատու այս զեկույցի բովանդակության համար, իսկ արտահայտված կարծիքները իմն են եւ ոչ մի ձեռով չեն ներկայացնում «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի կամ Լոնդոնի տնտեսագիտության դպրոցի կարծիքները, պաշտոնական դիրքորոշումը կամ քաղաքականությունը:

Արմինե Իշխանյան
Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքական գիտությունների դպրոց
2013թ. հոկտեմբեր

Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը եւ
ընապահականական ակտիվիզմը Հայաստանում

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Այս գեկույցը բնության է առնում վերջին շրջանում բնապահպանական հարցերի շուրջ Հայաստանում տեղի ունեցող քաղաքացիական հասարակության խմբերի սոցիալական մոբիլիզացումը: Այն մասնավորապես կենտրոնանում է երկրում իրականացվող հանքարդյունաբերության դեմ քաղաքացիական հասարակության կազմակերպված քարոզարշավների (campaigns) վրա: Սկսած 2000 թվականից, հանքարդյունաբերությունը գերակա ճյուղ է Հայաստանի տնտեսական զարգացման համար, իսկ մինչև 2011 թվականը այն դարձավ Հայաստանի տնտեսության հիմնական սեկտորներից մեկը՝ կազմելով երկրի արտահանումների կեսից ավելին: Հակառակ արտադրության եւ եկամուտների աճի մասին արվող հայտարարություններին, Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը հանքարդյունաբերության ոլորտում կատարվող աշխատանքների բերած նպաստը մնում է անորոշ: Փոխարենը, ինչպես փաստերն են վկայում, երկրում շարունակվում են տեղ գտնել սոցիալական բացառումը, անհավասարությունն ու արտագաղթը, իսկ հայաստանցիների 35%-ի կենսապայմանները մնում են աղքատության գծից ներքեւ:

Բնության առնելով Հայաստանի վերջին շրջանի (2007 թվականից մինչև այժմ) բնապահպանական ակտիվիզմը, գեկույցը ի ցույց է դնում Հայաստանում քաղաքացիական հասարակության նվաճումները, ինչպես նաեւ մարտահրավերներն ու խոչընդոտները, որոնց այն բախվում է: Այս գեկույցի նպատակն է՝ նպաստել երկրում հանքարդյունաբերության ոլորտի, ինչպես նաեւ ավելի լայն սոցիալ-տնտեսական եւ քաղաքական զարգացումների մասին Հայաստանում եւ սփյուռքի տարբեր համայնքներում ընթացող բանավեճին:

Չեկույցն անդրադառնում է հետեւյալ հարցերին.

1. Որո՞նք են այն գործոնները, որ հանգեցրին Հայաստանում քաղաքացիական նախաձեռնությունների առաջացմանը վերջին հինգ տարիների ընթացքում, եւ ինչ՞ են ձգտում հասնել բնապահպանական քաղաքացիական նախաձեռնությունները:
2. Ի՞նչ ուղղակի եւ անուղղակի ազդեցություններ են ունեցել բնապահպանական նախաձեռնությունները Հայաստանում:
3. Ի՞նչ դասեր կարելի է քաղել համաշխարհային փորձից:

Մինչև վերջերս, Հայաստանը, բազմաթիվ ուրիշ հետսոցիալիստական երկրների նման, ուներ բավական թույլ քաղաքացիական հասարակություն, որին բնորոշ էին ապակողմնորոշվածությունը, անտար-

բերությունն ու ցնիզմը: Քաղաքացիական նախաձեռնությունները, որ սկսեցին առաջ գալ 2007թ. եւ մեծ թվով ծավալվեցին 2010-2011թթ., հասան կարելու, թեեւ փոքր հաղթանակների ամենատարաբնույթ հարցերում՝ «Հետծննդյան ու նախաձեռնության նպաստի» մասին օրենքից մինչեւ պատմական շինությունների ու կանաչ տարածքների պահպանումը: Մինչեւ 2012թ., քաղաքական եւ ծրագրային քաղաքականության (policy) մակարդակներում քննարկումների բացակայության պայմաններում, քաղաքացիական հասարակության ակտիվիստները, աշխատելով քաղաքացիական նախաձեռնությունների եւ պաշտոնապես գրանցված, մասնագիտվացած հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների) միջոցով, առանցքային դեր խաղացին երկրում շրջակա միջավայրի, հանրային առողջության եւ կայուն զարգացման համար հանքարդյունաբերության հնարավոր սպառնալիքների մասին հասարակության իրազեկվածությունը բարձրացնելու եւ հանքարդյունաբերության դեմ քարոզարշավներ իրականացնելու գործում:

Չնայած այս հաջողություններին՝ դեռեւս անելու շատ բան կա, որպեսզի լուծվի նախաձեռնությունների մեջ բնակչության ավելի լայն հատված ներգրավելու խնդիրը: Հայաստանում հանքարդյունաբերության աճի եւ ծավալման դեմ քարոզարշավում քաղաքացիական նախաձեռնությունները վիթխարի եւ մեծապես անհավասար պայքարի են դեմ առնում: Կան լուրջ խոչընդոտներ, որոնց բախվում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունները եւ ակտիվիստները, երբ փորձում են հասնել ավելի մեծ հաշվետվողականության, մասնակցության եւ թափանցիկության ծրագրային քաղաքականությունների մշակման գործընթացներում: Անհավանական է թվում, թե քաղաքացիական նախաձեռնություններում ներգրավված ակտիվիստները միայն իրենց ուժերով ի վիճակի կլինեն հասնել այդ նպատակներին՝ առանց բազմապատկելու իրենց ջանքերը եւ ընդլայնելու մասնակցությունն ու ներգրավվածությունը: Հատկապես վերջինը հեշտ չի լինի անել, քանի որ քաղաքացիական հասարակության խմբերն առայժմ կենտրոնացած են Երեւանում եւ Նրանց մատչելի չեն հիմնական տեղեկատվամիջոցները՝ մասնավորապես հեռուստատեսային լուսաբանումը: Ավելին, Նրանց ջանքերի համար հավելյալ բարդություններ են հարուցում անտարբերությունը եւ վախը, որ առկա է Հայաստանի բազմաթիվ համայնքներում, թե քաղաքացիական ակտիվիզմի մեջ ներթաշվելը կարող է հանգեցնել բացասական հետեւանքների՝ այդ թվում աշխատանքը կորցնելուն և այլն:

Քանի որ հանքարդյունաբերության նախագծեր գոյություն ունեն ամբողջ աշխարհում, գեկույցը նաեւ դիտարկում է հայաստանյան զարգացումներն ավելի լայն, գլոբալ համատեքստում՝ մատնանշելով քաղված դասերը:

Չեկույցի եզրակացությունն այն է, որ պահանջվում է ավելի խիստ բնապահպանական կառավարում, ավելի մեծ հաշվետվողականություն, թափանցիկություն եւ որոշումների կայացման գործընթացում հանրային մասնակցություն: Ինչպես նաև պահանջվում է օրենքների եւ կարգավորման շրջանակների ուժեղացում կամ բարեփոխում՝ երաշխավորելու, որ կորպորացիաների եւ տնտեսական վերնախավերի (օլիգարխների) շահերը ավելի վեր չդասվեն մարդկանց շահերից եւ շրջակա միջավայրից:

Հարկ է ավելի խստորեն հետեւել գոյություն ունեցող օրենքներին ու կարգավորումներին, որպեսզի երկիրը կարողանա բարգավաճել եւ բռնել կայուն տնտեսական աճի եւ զարգացման ճանապարհը: Այս նպատակով կարելու է ընդլայնել հանրային բանավեճերի շրջանակը՝ դիտարկելու հանքարդյունաբերության իրական ծախսերը եւ օգուտները ոչ միայն վերնախավերի եւ կորպորացիաների նեղ խմբի, այլեւ ամբողջ երկրի համար:

Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը եւ
ընապահպանական ակտիվիզմը Հայաստանում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սկսած 2000 թվականից հանքարդյունաբերությունը եղել է գերակա ճյուղ Հայաստանի տնտեսական զարգացման համար, իսկ մինչև 2011 թվականը այն դարձավ Հայաստանի տնտեսության հիմնական սեկտորներից մեկը՝ կազմելով երկրի արտահանումների կեսից ավելին:

Հայաստանի կառավարությունը առանցքային դեր է վերագրել հանքարդյունաբերությանը, որպեսզի նպաստի երկրի տնտեսական աճին ու զարգացմանը եւ Հայաստանը դարձնի «հանքարդյունաբերության համար բարենպաստ երկիր» (mining friendly): Ներկայումս Հայաստանում պիկո օգտակար հանածոների 670 հանքավայր կա՝ այդ թվում 30¹ մետաղական (Հայաստանի Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն, 2013թ.): Թեեւ հանքարդյունաբերությունը Հայաստանի կառավարության կողմից նկարագրվում է որպես մի ոլորտ, որը «ազգային տնտեսության մեջ ունի առանցքային մասնաբաժին» (Հայաստանի Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն, 2011թ.), եւ բազմիցս հայտարարվել է, որ հանքարդյունաբերությունն ի ցույց է դրել «արտադրության եւ եկամուտների նշանակալի աճ» (Mining Journal, 2011, էջ, 5), փաստերը պարզորոշ վկայում են, որ Հայաստանում սոցիալական բացառումը, անհավասարությունն ու արտագաղթը շարունակվում ու ավելի մեծ չափեր են ընդունում (Asbarez, 2013, Grigoryan, 2013, Harutunyan, 2013, Policy Forum Armenia, 2012, Radio Free Europe/Radio Liberty, 2010), եւ հայաստանցիների 35%-ի կենսապայմանները մնում են աղքատության գծից ներքե (World Bank, 2013, Հայաստանի վիճակագրական ծառայություն, 2012թ.):

Հակառակ այն բանին, որ Հայաստանի զարգացման քաղաքականության համար հանքարդյունաբերությունը ձեռք էր բերել գերակա նշանակություն (Հայաստանի Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն, 2011թ.), մինչև 2012թ. շատ քիչ են եղել հարցի վերաբերյալ բանավեճեր կամ քննարկումներ ծրագրային քաղաքականության մակարդակում: Զաղաքական եւ ծրագրային քաղաքականությունների մակարդակում քննարկումների բացակայության պայմաններում Հայաստանում քաղաքացիական հասարակության ակտիվիստները, աշխատելով պաշ-

1. Պաշտոնական աղբյուրներում կան որոշ անհամապատասխանություններ՝ կապված շահագործման իրավունք ստացած մետաղական հանքերի ճշգրիտ թվի հետ: Համաձայն ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների վեբկայքի՝ 2013-ի հոկտեմբերի դրությամբ մետաղական հանքերի թիվը 30 էր: Համաձայն ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված պաշտոնական տեղեկատվության՝ 2013-ի հոկտեմբերի դրությամբ մետաղական հանքերի թիվը 26 էր:

տոնապես գրանցված, մասնագիտացված ՀԿ-ների, ինչպես նաև ներքևից ձևավորված սոցիալական շարժումների (grassroots) միջոցով, որոնք այստեղ «քաղաքացիական նախաձեռնություններ» անունը ստացան, առանցքային դեր խաղացին Հայաստանում շրջակա միջավայրի, հանրային առողջության և կայուն զարգացման համար հանքարդյունաբերության հնարավոր սպառնալիքների մասին հասարակության իրազեկվածությունը բարձրացնելու և հանքարդյունաբերության դեմ քարոզարշավներ իրականացնելու գործում: Հանքարդյունաբերություն կա աշխարհի շատ երկրներում: Այդպիսի երկրներում հանքարդյունաբերություն սկսելու մասին բանավեճերը հաճախ ընթանում են մարդու իրավունքների, շրջակա միջավայրի վրա ազդեցության, զարգացման, կառավարման, եկամուտների անհավասարության և ժողովրդավարության շուրջ (Auty et al., 2000, Bebbington et al., 2008b, Pegg, 2006, Weinthal and Luong, 2006): Մոբիլիզացումը ընդդեմ հանքարդյունաբերության կարող է հասկացվել որպես պատասխան՝ մարդկանց և շրջակա միջավայրի այն սպառնալիքներին, որ իրենց հետ բերում են կամ համարվում է, որ բերում են տնտեսական զարգացման որոշակի ձեւեր, ինչպիսին հանքարդյունաբերությունն է (Bebbington et al., 2008b, էջ 2890):

Այս զեկույցը քննության է առնում Հայաստանում քաղաքացիական հասարակության խմբերի, մասնավորապես՝ բնապահպանական հարցերի շուրջ քաղաքացիական նախաձեռնությունների մոբիլիզացումների առաջացումը: Այն հիմնվում է իմ նախորդ (սկսած 1996 թվականից) և ընթացիկ հետազոտությունների վրա, որոնք Հայաստանում քաղաքացիական հասարակության և սոցիալական փոխակերպումներում դրա խաղացած դերի մասին են: (Ishkanian, 2007a, Ishkanian, 2007b, Ishkanian, 2008/2012, Ishkanian, 2009, Ishkanian, Forthcoming, Ishkanian and Glasius, 2013): Չեկույցն անդրադառնում է հետևյալ հարցերին.

1. Որո՞նք են այն գործոնները, որ հանգեցրին Հայաստանում քաղաքացիական նախաձեռնությունների առաջացմանը վերջին հինգ տարիների ընթացքում: Եւ ինչի՞ են ձգտում հասնել բնապահպանական քաղաքացիական նախաձեռնությունները:
2. Ի՞նչ ուղղակի և անուղղակի ազդեցություններ են ունեցել բնապահպանական նախաձեռնությունները Հայաստանում:
3. Ի՞նչ դասեր կարելի է քաղել համաշխարհային փորձից:

Մինչև վերջերս Հայաստանը՝ բազմաթիվ ուրիշ հետսոցիալիստական երկրների նման, ուներ բավական թույլ քաղաքացիական հասարակություն, որին բնորոշ էին ապակողմնորոշվածությունը, անտարբերությունն ու ցինիզմը (Moriz Howard, 2003, Mandel, 2012, Hann, 2004): Թեև առկա է մեծ բանավեճ դրա սահմանման շուրջ, ես քաղաքացիական հասարակությունը հասկանում եմ որպես «ընդհանուր շահերի, նպատակների ու արժեքների շուրջ անհարկադիր կոլեկտիվ գործողության հարթակ» (LSE Centre for Civil Society, 2010): Այս սահմանման համաձայն ՀԿ-ները, քաղաքացիական նախաձեռնությունները, մասնագիտական ընկերակցությունները, առևտրային միավորումները, ինքնօգնության խմբերը, սոցիալական շարժումները եւ բիզնես ընկերակցությունները՝ բոլորը, քաղաքացիական հասարակության մաս են:

Քաղաքացիական նախաձեռնությունները, որ սկսեցին առաջ գալ 2007թ. եւ մեծ թվով ծավալվեցին 2010-2011թթ., հասան կարեւոր, թեեւ փոքր հաղթանակների, ամենատարաբնույթ հարցերում՝ «Հետծննդյան ու նախածննդյան նպաստի» մասին օրենքից մինչև պատմական շինությունների ու կանաչ տարածքների պահպանումը: Քաղաքացիական նախաձեռնությունները ներթելից ձեւավորված, կամավորական, անկուսակցական խմբեր են՝ սովորաբար բաղկացած բանից մինչև մի բանի հարյուր (հազվագյուտ դեպքերում) հոգուց, որոնք համախմբվում են՝ միասին առաջ քաշելու որեւէ հարց եւ բարձրացնելու հանրության իրազեկվածությունը դրա վերաբերյալ: Ինչպես մենք ավելի ուշ քննարկում ենք, քաղաքացիական նախաձեռնությունները տարբերվում են պաշտոնապես գրանցված, մասնագիտացված ՀԿ-ներից մի շարք կարեւոր կողմերով՝ այդ թվում իրենց կազմակերպական կառուցվածքներով եւ որոշումների ընդունման ձեւերով, իրենց ռազմավարություններով եւ գործողությունների գի-նանոցով, իրենց կողմից օտարերկրյա ֆինանսավորումը մերժելու եւ օտարերկրյա դոնորների օգնությանը չապավինելու դիրքորոշմամբ:

Սոցիալական մոբիլիզացումների ազդեցությունը վերլուծելիս, եթե մի կողմ թողնենք այն, ինչ Մանուել Կաստելսը (Castells, 2012) անվանում է խիստ արդյունավետությանը միտված տրամաբանություն, ապա տեսնում ենք, որ եղել են մի շարք ազդեցություններ, որ ի հայտ են եկել Հայաստանում քաղաքացիական նախաձեռնությունների առաջացման հետ միասին: Մասնավորապես բնապահպանական հարցերի վերաբերյալ քաղաքացիական նախաձեռնությունները հասել են հետեւյալ նվաճումներին.

1. Իրազեկվածության բարձրացում

Նախ և առաջ՝ քաղաքացիական ակտիվիստները, աշխատելով քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով եւ համագործակցելով ՀԿ-ների հետ, բարձրացրել են մարդկանց իրազեկվածությունը քնապահականական հարցերի վերաբերյալ: Նրանք բացել են հանքարդյունաբերության վնասներին վերաբերող քննարկումը հանրային դիտարկման առաջ: Այսպիսի գործողությունների միջոցով նրանք ցանկացել են հասնել այն բանին, որ ծրագրային քաղաքականություն մշակողներն ու կորպորացիաները լինեն հաշվետու:

2. Սոցիալական կապիտալի կառուցում եւ ավելի մեծ մասնակցության խթանում

Երկրորդ՝ քաղաքացիական նախաձեռնություններն իրենց կողմն են գրավել երիտասարդների՝ հասնելով նրանց աճող մասնակցությանը եւ քաղաքացիական ներգրավվածությանը: Թեեւ քաղաքացիական նախաձեռնությունների առաջացումը սկզբնապես բնորոշ է եղել Երեւանին, դրանք սկսում են առաջ գալ նաեւ ուրիշ քաղաքներում՝ այդ թվում Գյումրիում եւ Վանաձորում:

3. Ակտիվ քաղաքացիություն

Երրորդ՝ քաղաքացիական նախաձեռնություններն առաջ մղեցին ակտիվ եւ զորացված քաղաքացիության (empowered citizenship) մի ձեւ, որը կապում է քաղաքացիների իրավունքներն այն պատասխանատվություններին, որ նրանք պետք է ունենան իրենց համայնքների ու երկրի առաջ: Մերժելով քաղաքական կուսակցություններին, որոնք հաճախ ընկալվում են որպես կոռումպացված կամ անհրաժեշտաբար նեղ շահերով առաջնորդվող՝ քաղաքացիական ակտիվիստները գերադասում են գործել իրենց նման հայացքներ ունեցող ՀԿ-ների հետ՝ բողոքելու շրջակա միջավայրին հասցվող վնասի, որով հղի է հանքարդյունաբերությունը, ինչպես նաեւ սեփականության իրավունքի խախտումների եւ առողջապահական ռիսկերի դեմ: Սա նշանակում էր քաջալերել մարդկանց ստանձնել ավելի մեծ պատասխանատվություն այն խնդիրների համար, որոնց բախվում են նրանց համայնքները եւ դառնալ ակտիվ սուբյեկտներ, ովքեր ավելի շուտ բարձրաձայնում են իրենց մտահոգությունների մասին, քան մնում մի կողմ քաշված կրավորական եւ լուռ դիտորդներ: «Մաշտոցի պուրակի պաշտպանության» քաղաքացիական նախաձեռնության կարգախոսներից մեկն էր «Ինքնորոշված քաղաքացու ժամանակը»: Սա մատնանաշում էր, որ նրանք այնպիսի քաղաքացիներ են, որոնք ինքնորոշվել են՝ պայքարելու կոռուպցիայի, օլիգարխիայի եւ հանրային

շահի նկատմամբ մասնավոր շահը գերադասելու տիրող դրության դեմ: Չնայած այս նվաճումներին՝ բնակչության ավելի լայն շերտեր ներգրավելու համար դեռ շատ բան կա անելու: Հայաստանում հանքարդյունաբերության աճի եւ ծավալման դեմ քարոզարշավում քաղաքացիական նախաձեռնությունները վիթխարի եւ մեծապես անհավասար պայքարի են դեմ առնում:

Եթե նպատակը ծրագրային քաղաքականության մշակման մակարդակում փոփոխության հասնելն է, ապա դա հնարավոր է միայն ժամանակի ընթացքում եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ ակտիվիստների հետեւողական եւ անգիջում ջանքերի շնորհիվ՝ պարտադրելով քաղաքական առաջնորդներին լինել հաշվետու եւ պահանջելով ավելի մեծ թափանցիկություն ու մասնակցություն որոշումների կայացման եւ ծրագրային քաղաքականության մշակման գործընթացներում: Բայց կան լուրջ խոչընդոտներ, որոնց բախվում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունները եւ ակտիվիստները, երբ փորձում են ապահովել ավելի մեծ հաշվետվողականություն, մասնակցություն եւ թափանցիկություն ծրագրային քաղաքականության մշակման գործընթացներում: Զիչ հավանական է, թե քաղաքացիական նախաձեռնություններում ընդգրկված ակտիվիստները միայն իրենց ուժերով ի վիճակի կլինեն հասնել այդ նպատակներին՝ առանց բազմապատկելու իրենց ջանքերը եւ ընդլայնելու մասնակցությունն ու ներգրավվածությունը: Հատկապես վերջինը հեշտ չի լինի անել, քանի որ քաղաքացիական հասարակության խմբերը մնում են կենտրոնացած Երեւանում եւ Նրանց մատչելի չեն հիմնական տեղեկատվամիջոցները՝ մասնավորապես հեռուստատեսային լուսաբանումը: Ավելին, Նրանց անելիքը բարդանում է անտարբերության եւ վախի պայմաններում, որ առկա է Հայաստանի բազմաթիվ համայնքներում, թե քաղաքացիական ակտիվիզմի մեջ ներթաշվելը կարող է հանգեցնել բացասական հետեւանքների՝ այդ թվում աշխատանքը կորցնելուն եւ այլն:

Քաղաքացիական հասարակությունը տրամադրում է այն մտավոր և համագործակցային տարածությունը, որտեղ կարելի է «խորհրդածել բաց եւ քննադատորեն» եւ մարտահրավեր նետել ստատուս-քվոյին (Howell and Pearce, 2001, էջ 237): Պատմականորեն սոցիալական մոբիլիզացումները եւ ուղիղ գործողությունները արդեն երկար ժամանակ օգտագործվում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից՝ հանրության ուշադրությունը սոցիալական հարցերի վրա սեւեռելու եւ դրանց վերաբերյալ բանավեճ ու

գործողություն հրահրելու համար (Oliviero and Simmins, 2002, էջ 137): Մոլորակի տարբեր ծայրերում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները արդյունավետորեն օգտագործել են «անվանելու և ամօթահար անելու» մարտավարությունը՝ ի ցույց դնելով կորպորատիվ չարաշահումները և բացասական փորձը թե՛ ազգային, թե՛ անդրազգային համատեքստերում (Anheier and Hawkes, 2007, Ebrahim and Weisband, 2007): Մասնավորապես բազմազգային կորպորացիաների կոմից սոցիալական և շրջակա միջավայրին վերաբերող պատասխանատվության բացակայությունը ուժեղացրել է քաղաքացիական հասարակության ջանքերը՝ մշտադիտարկելու և այս դերակատարներին պարտադրելու, որ լինեն հաշվետու (Winston, 2002): Աշխարհում, ինչպես և պատմականորեն հայտնի է, որ ակտիվ քաղաքացիական հասարակությունը կարելի է դրել է խաղացել ներառական քաղաքական հաստատությունների ձևավորման գործում, որոնք ստեղծում են նորարարության, տնտեսական ընդլայնման և առավել լայն, ընդգրկուն բարեկեցության ողջախոհ շրջանակներ (Acemoglu and Robertson, 2013):

Այս զեկույցը ի ցույց է դնում Հայաստանում քաղաքացիական հասարակության նվաճումները, ինչպես նաեւ մարտահրավերներն ու խոչընդոտները, որոնց այն բախվում է: Քանի որ հանքարդյունաբերությունը համաշխարհային երեւոյթ է, որն առկա է եւ՝ գլոբալ Հարավում, եւ՝ գլոբալ Հյուսիսում, զեկույցը նաեւ քննարկում է հայաստանյան զարգացումներն ավելի ընդարձակ, գլոբալ համատեքստում՝ նախորդ փոփոխությունները քաղելու համար: Այս զեկույցի նպատակն է՝ սեփական նպատակներով բերել երկրում հանքարդյունաբերության ոլորտի, ինչպես նաեւ ավելի լայն սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումների մասին Հայաստանում և սփյուռքի համայնքներում ընթացող բանավեճին:

Մերօդաբանություն

Այս զեկույցը հիմնված է Հայաստանում իրականացված ծավալուն որակական հետազոտության վրա՝ հեղինակի երեք դաշտային այցելությունների ընթացքում. 2011 թվականի սեպտեմբերին, 2012 թվականի մայիսին և 2012 թվականի հոկտեմբերին: Արդյունքները, որ տեղ են գտնել զեկույցում, հիմնված են 82 անհատական հար-

ցազրույցի, 16 ֆոկլուս խմբերի եւ Հայաստանի լրատվամիջոցների՝ 2007-2012թթ. համապատասխան հրապարակումների ծավալուն վերլուծության եւ հետազոտության վրա:

ա) Հարցազրույցներ

Անհատական հարցազրույցներն իրականացվել են հետեւյալ շահագրգիռ կողմերի հետ.

1. բաղաբացիական նախաձեռնություններում ներգրավված տեղական ակտիվիստներ
2. անհատներ այն համայնքներից, որոնք անմիջապես ազդեցություն են կրում հանքարդյունաբերությունից
3. ներկայացուցիչներ տեղական եւ Հայաստանում տեղակայված միջազգային ՀԿ-ներից, այդ թվում՝ բնապահպանական ՀԿ-ներ եւ մարդու իրավունքներով զբաղվող ՀԿ-ներ, որոնք աշխատում են բնապահպանական հարցերի շուրջ
4. ակտիվիստներ սփյուռքից, ովքեր սատարում են Հայաստանում տեղի ունեցող բնապահպանական նախաձեռնություններին եւ քարոզարշավները
5. լրագրողներ եւ բլոգերներ
6. գիտնականներ
7. դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչներ
8. բաղաբական կուսակցությունների ներկայացուցիչներ:

Հակառակ մեր բազմաթիվ փորձերին՝ մենք անկարող եղանք հարցազրույց իրականացնել Հայաստանի բնապահպանության նախարարության որեւէ պաշտոնյայի հետ:

Հարցվողների հետ բոլոր հարցազրույցները ձայնագրվել են, ապա տղագրվել: Մեծամասնությունը իրականացվել է հայերեն, մնացածը՝ անգլերեն: Հարցազրույցները վերլուծվել են՝ օգտագործելով NVivo համակարգչային ծրագրաշարը: Հարցվողները ընտրվել են համաձայն կազմակերպությունների եւ շարժումների քարտեզագրման: Սփյուռքի ակտիվիստների եւ Հայաստանում չբնակվող անհատների հետ հարցազրույցներն իրականացվել են Սքայփի (Skype) միջոցով: Չեկուցման մեջ բոլոր հարցազրույցներն օգտագործված են առանց անունների հիշատակման, միայն ըստ անցկացման տարեթվի: Հարցվողի անունն օգտագործվում է միայն այն դեպքերում, երբ նախապես ստացվել է նրա համաձայնությունը:

բ) Ֆոկուս խմբեր

Հետազոտության ընթացքում 2011 և 2012թթ. իրականացվել են տասնվեց ֆոկուս խմբային հարցազրույցներ, որոնցից ինը՝ 2011թ. եւ յոթը՝ 2012թ.: Տասնվեց ֆոկուս խմբերից յոթը իրականացվել են Երեւանի տարբեր համայնքներում, իսկ մնացած ինը՝ Հայաստանի ստորեւ թվարկված քաղաքներում ու գյուղերում: Ֆոկուս խմբերը ձևավորվել են ըստ տարիքի եւ սեռի: Ֆոկուս խմբերը կազմակերպել եւ վարել են «Սոցիոսկոպ» ՀԿ-ի հետազոտողները՝ որպես այս հետազոտական նախագծի մի մաս:

- Քաղաքներ (այբբենական կարգով)
 - Ալավերդի (Լոռու մարզ)
 - Գյումրի (Շիրակի մարզ)
 - Կապան (Սյունիքի մարզ)
 - Մեղրի (Սյունիքի մարզ)
 - Երեւան (7 առանձին ֆոկուս խումբ տարբեր համայնքներից)
- Գյուղեր (այբբենական կարգով)
 - Սայաթ-Նովա (Արարատի մարզ)
 - Շնող (Լոռու մարզ)
 - Տաթեւ (Սյունիքի մարզ)
 - Թեղուտ (Լոռու մարզ):

գ) Գրականության վերլուծություն

Կատարվել է Հայաստանի քաղաքացիական հասարակության եւ քնապահականության մասին հետազոտության համար հետաքրքրություններ կայացնող գիտական, ՀԿ-ների եւ «թինք-թանք»-ների կողմից հրապարակումների բազմակողմանի վերլուծություն: Զննության են առնվել նաեւ այնպիսի ինքնահրատ խոսքեր, ինչպիսիք են բլոգները, վեբկայքերը եւ մամուլի հաղորդագրությունները՝ թողարկված քաղաքացիական նախաձեռնությունների եւ ակտիվիստների կողմից:

դ) Լրատվամիջոցների վերլուծություն

«Սոցիոսկոպ» ՀԿ-ն իրականացրել է մեդիա հաղորդումների վերլուծություն՝ գնահատելու Թեղուտին վերաբերող լուսաբանման մակարդակները:

Քաղաքացիական ակտիվիզմի ընթացիկ շրջանը քննարկելուց առաջ, ստորեւ ներկայացնում եմ Հայաստանում քնապահականական շարժման եւ քաղաքացիական հասարակության զարգացման վերջին երեք տասնամյակի համառոտ պատմությունը:

Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը եւ
ընապահպանական ակտիվիզմը Հայաստանում

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

1986-2006 թթ. բնապահպանական հարցերի շուրջ քաղաքացիական հասարակության ակտիվիզմի առաջին փուլը

Ոգեշնչվելով «գլասնոստով» եւ «պերեստրոյկայով» եւ օգտագործելով Գորբաչովի փաստարկներն ու տրամաբանական հիմնավորումները՝ 1980-ականների վերջին մի խումբ խորհրդային հանրապետություններում, այդ թվում՝ Էստոնիայում, Լիտվայում, Չեխոսլովակիայում, Վրաստանում եւ Ուկրաինայում, ի հայտ եկան մի քանի ժողովրդական շարժումներ: Գրեթե բոլոր այս շարժումները սկսեցին բնապահպանական քաղաքականության բարեփոխման կոչերով, քանի որ, սկսած 1980-ականների կեսից՝ բնապահպանական շարժումները մասամբ հանդուրժվում էին խորհրդային Միությունում: Ըստ Լեւոն Աբրահամյանի՝ սրա պատճառն այն էր, որ խորհրդային իշխանությունները չէին կարծում, թե բնապահպանական շարժումները կարող են մեծ սպառնալիք ներկայացնել վարչակարգի համար (Abrahamian, 2005, էջ 253): Արդյոք այս բնապահպանական շարժումները խաղացին «կատալիզատորի» կամ «սուրհանդակի» դեր: Ինչպես պնդում է Աբրահամյանը, Հայաստանի դեպքում ճիշտ էր երկրորդը (Abrahamian, 2005, էջ 255), բայց խորհրդային հանրապետություններում առաջացած բազմաթիվ բնապահպանական շարժումներ դարձան «սուռնգատ շարժումներ»՝ հետապնդելով քաղաքականապես ավելի զգայուն նպատակներ՝ այդ թվում Կոմունիստական կուսակցության վերահսկողությանը վերջ տալը եւ անկախության հասնելը (Henry, 2002, էջ 186):

Երբ 1980-ականների կեսին Հայաստանում սկսեց ի հայտ գալ բնապահպանական ակտիվիզմը, խորհրդային կառավարությունը չփորձեց անմիջապես ցրել ցույցերը, այլ «գլասնոստի» ոգով թույլ տվեց, որ խաղաղ ցույցերը շարունակվեն: Խորհրդային Հայաստանի բնապահպանական ակտիվիստները, որոնց շարքերում կային առաջադիմական եւ ազատական հայացքներով գիտնականներ, դասախոսներ եւ գրողներ, ձեւակերպեցին հարցը ազգային կենաց եւ մահու պայքարի լեզվով եւ ուղղեցին իրենց մտահոգությունները կառավարության պաշտոնյաներին՝ Երեւանում եւ Մոսկվայում (Malakasian, 1996, էջ 133): Օրինակ՝ 1986թ. մարտին 350 նշանավոր հայ մտավորականներ բաց նամակ ուղարկեցին Գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովին՝ մանրամասն ներկայացնելով հանքարդյունաբերության, մետաղագործության, քիմիական եւ սպասարկող արդյունաբերությունների հարուցած արդյունաբերական աղտոտման եւ

շրջակա միջավայրի վիճակի վատթարացման հետեւանքները: Երկու տարվա ընթացքում՝ 1986թ. մարտից մինչեւ 1988թ. փետրվարը, բնապահպանական շարժումը շարունակում էր աճել. տեղի ունեցան մի շարք ցույցեր Երեւանում գտնվող «Նաիրիտ» քիմիական գործարանի եւ Թուրքիայի հետ Հայաստանի սահմանի մոտ գտնվող «Մեծամորի ատոմակայանի» հարուցած աղտոտման դեմ: Ի վերջո, ցույցերը ստիպեցին փակել ինչպես «Մեծամորի ատոմակայանը», այնպես էլ «Նաիրիտը»:

1988թ. կեսին բնապահպանական շարժումը Հայաստանում, ինչպես եւ համապատասխան շարժումները բալթյան հանրապետություններում, փոխակերպվեցին շարժումների, որոնք ավելի լայն ազգային իրավունքների, քաղաքական բարեփոխումների եւ, ի վերջո, անկախության կոչեր էին անում: Երբ 1991թ. Հայաստանն անկախացավ Խորհրդային Միությունից, բնապահպանական մտահոգությունները հետին պլան մղվեցին այնպիսի ավելի հրատապ հարցերի կողքին, ինչպես 1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետեւանքների վերացումը, Ադերբեյջանի հետ պատերազմի եւ շրջափակման ազդեցության հաղթահարումը: Վարչաիրավայական տնտեսության արագ կազմալուծման հարուցած տնտեսական անկումը, «շոկային թերապիայի» ծրագրային քաղաքականությունների հետ միասին, ծնեցին սոցիալ-տնտեսական դժվարությունների այն ժամանակաշրջանը, որ հասարակության կողմից ստացավ «մթի ու ցրտի տարիներ» անունը:

1990-ականների սկզբին Հայաստանի բնապահպանական կազմակերպությունների վարկն ընկավ հասարակության աչքին, քանի որ Նրանք մեղադրվում էին իրենց անհեռատեսության համար, երբ ճնշում էին գործադրում «Նաիրիտ» քիմիական գործարանը եւ «Մեծամորի ատոմակայանը» փակելու ուղղությամբ (Զառնաթերփարթ ինթերնեշնլ, 2010թ. Հայաստանի բնապահպանական կազմակերպությունների ազդեցությունը քաղաքականության փոփոխության վրա, Երեւան, 2010թ.): Սա ծնեց անվստահություն Հայաստանում բնապահպանական գաղափարների նկատմամբ, քանզի հասարակական եւ քաղաքական առաջնորդները բնապահպան ակտիվիստներին մեղադրում էին շրջակա միջավայրին վերաբերող մտահոգությունները տնտեսական զարգացումից վեր դասելու համար: Ուստի՝ անկախության առաջին մեկուկես տասնամյակի (1991-2005թթ.) ընթացքում Հայաստանում շատ քիչ ակտիվություն է նկատվել շրջակա միջավայրին վերաբերող հարցերում:

Ինչպես ասաց «Հանուն կայուն մարդկային զարգացման» ՀԿ-ի ղեկավար, Բնապահպանության նախկին նախարար (1991-1994թթ.) Կարինե Դանիելյանը.

Հետո եղավ մեծ հիասթափություն Էկոլոգների նկատմամբ (1990-ականներին), մարդիկ սկսեցին համարել, թե Էկոլոգները միայն վնաս են տալիս: Ժողովուրդը նաեւ շրջվեց մեր դեմ, որով հետեւ խիստ վատացավ սոցիալ-տնտեսական իրավիճակը, մի քանի պատճառներով՝ այդ թվում տնտեսական համակարգի փլուզման, պատերազմի եւ այլն: Երկար ժամանակ «Էկոլոգ» (բնապահպան) անունը շատ բացասական էր ընկալվում: Բայց դրությունը փոխվեց (2000-ականներին), քանի որ իրավիճակը քիչ թե շատ կայունացավ ու նոր սերունդ առաջ եկավ, որը սկսեց տեսնել երկրում բնապահպանական վիճակի վատթարացումը: Նրանք ավելի սթափ էին գնահատում թե՛ հետզհետե սրվող Էկոլոգիական վիճակը (Հայաստանում), թե՛ դրա հետևանքներն ապագայի համար (հեղինակի հարցազրույցը, հոկտեմբերի 13, 2012թ.):

Եւ միայն 2005 թ.-ին էր, երբ ի հայտ եկավ Շիկահողի շուրջ մղվող պայքարը, շրջակա միջավայրի հարցերը վերստին հայտնվեցին հասարակական օրակարգում:

Շիկահող

«Տ.Օ.Տ. Շիկահող» քարոզարշավը քաղաքացիական հասարակության եւ ակադեմիական 40 կազմակերպությունների (եւ՝ տեղական, եւ՝ միջազգային) դաշինք էր, որոնք միավորվեցին 2005 թ.՝ հակադրվելու «Շիկահող» արգելոցի տարածքով անցնող մայրուղու կառուցմանը (Քաունթերփարթ Ինթերնեշնլ, 2010թ, Policy Forum Armenia, 2010): Քարոզարշավը, որը կենտրոնանում էր մարդկանց իրազեկվածության բարձրացման եւ նախատեսված մայրուղու համար այլընտրանքային ուղու մշակման վրա, հաջողության հասավ՝ փոխելով քաղաքականությունը եւ հանգեցնելով այնպիսի ճանապարհի կառուցմանը, որը շրջանցում էր արգելոցը: «Տ.Օ.Տ. Շիկահող» քարոզարշավի հաջողությունը նոր լիցք հաղորդեց բազմաթիվ բնապահպանների եւ խթան դարձավ այլ բնապահպանական քարոզարշավների համար:

Շիկահողի համար պայքարի հաջողությունից հետո մի շարք բնապահական ՀԿ-ներ, որոնք ներգրավված էին դաշինքի մեջ, իրենց ուշադրությունը սեւեռեցին Լոռու մարզում գտնվող «Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի» վրա: ՀԿ-ները նամակներ գրեցին պաշտոնյաներին, երկխոսություն սկսեցին կառավարության ներկայացուցիչների հետ եւ հետեւողական ջանքեր գործադրեցին՝ բարձրացնելու հանրային իրազեկվածությունը: Ի տարբերություն «Շիկահողի» դեպքի՝ այս անգամ ՀԿ-ներն անկարող եղան որեւէ փոփոխության հասնել Թեղուտին վերաբերող քաղաքականության մեջ, եւ որոշ ՀԿ-ներ, ինչպես եւ բացահայտեցի իմ հարցազրույցների միջոցով, հաշտվեցին այն փաստի հետ, որ հանքավայրը շուտով պետք է բացվի, եւ փոխարենը իրենց ուշադրությունը կենտրոնացրին ավելի շատ վնասների մեղմացման, քան հանքի բացմանը հակադրվելու վրա: Մի հարցազրույցում Հայաստանի բնապահականական ՀԿ-ներից մեկի ներկայացուցիչն ասաց.

Մենք դեմ էինք Թեղուտի հանքավայրին եւ մասնակցեցինք 2007թ. տեղի ունեցած հանրային լուսմներին: Եւ մեզ համար զարմանալի էր, որ այդ ընթացքում մեզ չմիացան կամ հակված չէին մեզ միանալ ավելի շատ ՀԿ-ներ: Այդ ժամանակ (2007 թվականի սկզբին) դեռ քաղաքացիական նախաձեռնություններ չկային:

Այսօր երիտասարդությունն է բարձրացնում Թեղուտի հարցը, այլ ոչ թե բնապահականական ՀԿ-ները: Այդուհանդերձ, պետք է լինել իրատես: Ես կարծում եմ, որ այս պահին ավելի լավ է իրականացնել բնապահականական մոնիթորինգ, քան մտածել, թե կարող ես կանգնեցնել հանքի աշխատանքը: Մենք ստորագրել ենք նախագահին եւ վարչապետին ուղղված նամակ՝ կոչ անելով Թեղուտի համար իրականացնել բնապահականական ազդեցության անկախ գնահատում, որ կկատարվի միջազգային կազմակերպությունների կողմից: Մենք կարծում ենք, որ այս պահին լավագույնը վնասի նվազեցումն է: Վիթխարի քանակությամբ փող է ծախսվել, եւ դժվար կլինի կանգնեցնել այդ ընթացքը:

Քաղաքացիական նախաձեռնություններն ավելի ազատ են (քան ՀԿ-ները): Մենք չենք կարող անել այնպիսի արմատական պնդումներ, ինչպես Նրանք են անում: Մենք լուրջ ՀԿ-ներ ենք եւ պետք է գործենք խելամտորեն: Նրանք ավելի ազատ են արտահայտում իրենց մտքերը եւ հաճախ այդ բանն անում են ավելի համարձակ եւ կոպիտ ձեւով» (հեղինակի հարցազրույցը, հոկտեմբերի 14, 2012թ.):

Երբ ես հարցրի, թե արդյոք նրանց զուսպ պահվածքը եւ զգուշությունը հնարավոր պատասխան գործողություններից ունեցած վախի հետեւանք են, նա պատասխանեց,

Մենք ոչ թե վախենում ենք, որ նրանք կպատժեն մեզ, այլ որ կխանգարեն մեր աշխատանքին: Եւ շրջակա միջավայրը պահպանելու համար մենք պետք է աշխատենք կառավարության հետ, այլ ոչ թե նրա դեմ (հեղինակի հարցազրույցը, հոկտեմբերի 14, 2012):

Մնում է տեսնել, թե երկարատեւ հեռանկարում որ մոտեցումները կլինեն ավելի արդյունավետ՝ «համարձակ», թե՞ «խելամիտ»:

2007 թվականից մինչեւ այժմ. քաղաքացիական հասարակության եւ բնապահպանական ակտիվիզմի երկրորդ ալիքը

Եթե 1990-ականներին բնապահպանական ակտիվիզմը հետին պլան էր մղվել, ապա այդ նույն ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցավ ՀԿ-ների թվի շատ արագ, իսկապես ապշեցուցիչ աճ: Շուկայական տնտեսությանը եւ ժողովրդավարությանն աջակցելը անցումային օրակարգի երկու գլխավոր նպատակներն էին: Օրակարգ, որն իրականացվում էր Կենտրոնական Արեւելյան Եվրոպայում եւ Նախկին Խորհրդային Միությունում սոցիալիստական վարչակարգերի փլուզումից հետո: Անցման համատեքստում քաղաքացիական հասարակության կառուցումը դիտարկվում էր եւ որպես միջոց, եւ որպես նպատակ՝ ձեռք բերելու ժողովրդավարություն եւ զարգացնելու ազատ շուկայական տնտեսություն սորազատական (սեռլիբերալ) բարեփոխումների իրականացման միջոցով՝ Ներառյալ, ի թիվս այլ բաների, սոցիալիստական համընդհանուր բարեկեցության պետությունների կրճատումը, պետական դրամական հատկացումների նվազեցումը, պետական գույքի եւ հողի մասնավորացումը, ինչպես նաեւ բարեկեցության ապահովման գործի փոխանցումը ոչ պետական դերակատարներին (Ներառյալ ՀԿ-ները եւ մասնավոր կորպորացիաները): 1990-ականների ընթացքում մեծ ծավալի ֆինանսական եւ մարդկային ռեսուրսներ ներդրվեցին քաղաքացիական հասարակության կառուցման եւ ուժեղացման գործի մեջ դրամաշնորհների եւ վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաեւ նոր ունակությունների ձեւավորման եւ փոխանակման ծրագրերի

միջոցով: Նախկին սոցիալիստական երկրներում քաղաքացիական հասարակությանը և ժողովրդավարությանը աջակցելու նպատակով վիթխարածավալ օտարերկրյա օգնության ներդրումը հանգեցրեց «տեղական ՀԿ-ների բուռն աճի» (US Agency for International Development, 1999): Օրինակ՝ 1994 թվականին Հայաստանի արդարադատության նախարարությունում գրանցված էր միայն 44 հասարակական կազմակերպություն: Երկու տարի անց՝ 1996թ. գրանցված ՀԿ-ների թիվը 1500-ից ավելի էր՝ շնորհիվ օտարերկրյա դրամաշնորհների աճող մատչելիության, ինչպես նաև 1995թ. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից ֆինանսավորվող ՀԿ-ների ռեսուրսային և թրեյնինգի կենտրոնի բացման, որի միակ նպատակը Հայաստանում ՀԿ սեկտորի ստեղծումն էր (Ishkanian, 2008): Մինչև 2010թ. Հայաստանում արդեն կար ավելի քան 3300 գրանցված ՀԿ (Սիվիլիթասս հիմնադրամ, 2011թ.), բայց շատերն են ընդունում, որ այս թիվը չի արտացոլում մասնակցության և ակտիվիզմի իսկական մակարդակը (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2011b, Ishkanian, 2008, Քանոնթերփարթ Ինթերնեշնլ, 2010թ.), և մինչ ակտիվ ՀԿ-ների մի փոքր խումբ արդյունավետորեն բարձրացնում էր այն խնդիրները, որոնց բախվում էր հասարակությունը, շատ ավելի շատերը մնում էին կազմակերպություններ միայն թղթի վրա:

Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը եւ
ընապահականական ակտիվիզմը Հայաստանում

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի՞նչ են քաղաքացիական նախաձեռնությունները

Քաղաքացիական ակտիվիզմի ներկա ալիքը, որն ստացել է նոր «գարթոնք» անունը, սկսվել է 2008 թվականին, մեծապես ընդլայնվել 2011 թվականին եւ շարունակվում է այսօր: Այս ալիքի համար բնութագրական է ներքեւից ձեւավորված շարժումների առաջացումն ու աճը, որոնք տեղում հայտնի են որպես «քաղաքացիական նախաձեռնություններ»: Եթե հստակեցնենք, ապա քաղաքացիական նախաձեռնությունները տարբեր են պաշտոնապես գրանցված, մասնագիտացված ԶԿ-ներից մի շարք առանցքային կողմերով, այդ թվում՝ նրանց կազմակերպական կառուցվածքները եւ որոշումների ընդունման ձեւերը, ռազմավարություններն ու գործողության գիւնանոցը, նրանց կողմից օտարերկրյա ֆինանսավորման մերժումը եւ օտարերկրյա դոնորների օգնությանը չապավինելը: Բայց այս տարբերությունները չեն նշանակում, թե նրանք կապեր չունեն ԶԿ-ների հետ: Ընդհակառակը՝ ԶԿ-ներում աշխատող անհատները հաճախ միանում են քաղաքացիական նախաձեռնություններին՝ իրենց ունակություններով աջակցելով վերջիններիս: Որոշ դեպքերում, ինչպես կթնարկեմ ավելի ուշ, որպես հաջորդ քայլ, ԶԿ-ները տրամադրում են խորհրդատվություն եւ օժանդակություն՝ օգնելով նախաձեռնությունների ազդեցության մեծացմանն ու ընդլայնմանը: Քաղաքացիական ակտիվիստները, որոնք ԶԿ-ների աշխատակիցներ են, նկարագրում են իրենց մասնակցությունը քաղաքացիական նախաձեռնություններին՝ որպես անձնական ընտրության հարց եւ իրենց քաղաքացիական դիրքորոշման արտահայտություն: Ուրիշները պնդում են, որ ԶԿ-ներում, այլ ոչ թե մասնավոր կամ պետական հատվածում, աշխատելն է նրանց տալիս ավելի մեծ ազատություն՝ մասնակցելու քաղաքացիական նախաձեռնություններին՝ առանց վախենալու, որ կպատժվեն իրենց ակտիվիզմի համար:

Քաղաքացիական նախաձեռնությունները ներքեւից ձեւավորված, կամավորական, անկուսակցական խմբեր են՝ սովորաբար բաղկացած բնակից միևե մի քանի հարյուր (հազվագյուտ դեպքերում) հոգուց, որոնք համախմբվում են՝ միասին առաջ քաշելու որեւէ հարց եւ բարձրացնելու հանրության իրազեկվածությունը դրա վերաբերյալ: Քաղաքացիական նախաձեռնությունների ճնշող մեծամասնությունը կամ տեղակայված է Երեւանում, կամ ներառում է Երեւանաբնակ ակտիվիստների գործունե մասնակցությունը: Մասնակիցների տարիքը ընկած է 20-ի եւ 45-ի միջեւ, որոնց թվում առավել ակտիվ են մոտ 25-35 տարեկանները:

Քաղաքացիական նախաձեռնությունների մեծամասնությունը բաղկացած է որոշակի խումբ կազմող ակտիվիստների միջուկից, որտեղ գոյություն ունի ոչ ֆորմալ առաջնորդություն առանց հիերարխիայի: Քաղաքացիական նախաձեռնությունների կառուցվածքը հորիզոնական է, եւ որոշումների ընդունումը հիմնված է համաձայնության (consensus) վրա դեմ առ դեմ կամ Ֆեյսբուքի փակ խմբերում ընթացող քննարկումների միջոցով: Հորիզոնականությունը գնահատվում է, իսկ բոլոր անդամների ակտիվ մասնակցությունը՝ քաջալերվում:

Քաղաքացիական նախաձեռնությունները սովորաբար ունենում են ավելի շատ առցանց աջակիցներ, եւ խնդիրն այն է, թե ինչպես անել, որ մարդիկ պարզապես Ֆեյսբուքում ինչ-որ բան «հավանելու» (“liking”) միջոցով մասնակցությունից անցնեն անձամբ իրադարձությանը կամ ուղիղ գործողությանը իրապես մասնակցելուն:

Քաղաքացիական նախաձեռնությունները կարելու դեր են կատարել սոցիալական կապիտալի կառուցման գործում՝ առաջին հերթին «ամրապնդելով» (“bonding”) այն: Սոցիալական կապիտալի «ամրապնդումը» վերաբերում է տվյալ խմբի անդամների միջեւ գոյություն ունեցող կապերին, մինչդեռ սոցիալական կապիտալի «կամրջումը» (“bridging”) եւ «կապումը» (“linking”) վերաբերում են այն կապերին, որ ստեղծվում են տարբեր խմբերի անհատների միջեւ (Putnam, 2000, Szreter, 2002): Վերջին տարիներին քաղաքացիական ակտիվիստները Հայաստանում ջանքեր են գործադրում՝ «կամրջվելու» եւ «կապվելու» ուրիշների հետ առաջնային խմբի եւ ցանցի սահմաններից անդին:

Քաղաքացիական նախաձեռնությունները հասցեագրում են հարցերի շատ ընդարձակ շարք՝ անտառների պաշտպանությունից մինչեւ պայքար «նախաձեռնության և հետձեռնության նպաստի վճարման» համար, ինչպես նաեւ պայքարը պատմական շինությունների եւ կանաչ տառածքների պահպանման համար:

Ահա այն քաղաքացիական նախաձեռնությունների ցանկը, որոնք ձեւավորվել են 2007-2013 թվականներին:


Աղյուսակ 1.

Անվանումը	Հասցեագրված խնդիրները	Սկզբնա- ժամկետը	Տարածքը	Կարգա- վիճակը
«Փրկենք Թեղուտը» քաղաքացիական նախաձեռնություն	Բնապահ- պանություն	Նոյեմբեր 2007	Երեւան	Ընթացիկ
«Անհատ տաքսիստների իրավունքների պաշտպանություն»	Սպառողների իրավունքներ	Փետրվար 2009	Գյումրի, Վանաձոր, Երեւան	Հանգուցա- լուծված (դրական)
«Մեր քաղաքը» քաղաքացիական նախաձեռնություն	Մշակութային պահպանություն	Նոյեմբեր 2010	Երեւան	Ընթացիկ
«Մենք ենք այս քաղաքի տերը» քաղաքացիական նախաձեռնություն- «Փրկենք վիշապների պուրակը»	Հանրային պուրակներ, կանաչ տարածքներ	Նոյեմբեր 2010	Երեւան	Հանգուցա- լուծված (դրական)
«Պահանջում ենք անկախ դատաքննություն Չարուհի Պետրոսյանի սպանության գործով»	Կանանց իրավունքներ	Նոյեմբեր 2010	Երեւան	Հանգուցա- լուծված (դրական)
«Ժամանակավոր անաշխատունակ անձանց իրավունքների պաշտպանություն»	Հղի կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանություն	Դեկտեմբեր 2010	Երեւան	Հանգուցա- լուծված (դրական)
«SOS! Փրկենք Մոսկվա կինոթատրոնի ամառային դահլիճը»	Մշակութային պահպանություն	Մարտ 2010	Երեւան	Հանգուցա- լուծված (բացասական)
«Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը»	Մշակութային պահպանություն (լեզվի պահպանություն)	Ապրիլ 2010	Երեւան	Ընթացիկ
«Մենք ենք այս քաղաքի տերը» քաղաքացիական նախաձեռնություն	Հանրային պուրակներ, կանաչ տարածքներ	Ապրիլ 2010	Երեւան	Ընթացիկ
«Մենք ենք այս քաղաքի տերը - Փրկենք ռուսախոսական այգին»	Հանրային պուրակներ, կանաչ տարածքներ	Ապրիլ 2010	Երեւան	Հանգուցա- լուծված (բացասական)


«Պահպանենք Թռչկանի ջրվեժը» քաղաքացիական նախաձեռնություն	Բնապահ- պանություն	Սեպտեմբեր 2011	Երեւան	Հանգուցա- լուծված (դրական)
«Դեմ ենք ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի տան ոչնչացմանը»	Մշակութային պահպանություն	Հոկտեմբեր 2011	Երեւան	Հանգուցա- լուծված (բացասական)
«Զերմուկը հանք չի դառնա» քաղաքացիական նախաձեռնություն	Բնապահ- պանություն	Նոյեմբեր 2011	Զերմուկի և Երեւանի ակտի- վիստների համա- դրություն	Ընթացիկ
«SOS Հրազդան» քաղաքացիական նախաձեռնություն	Բնապահ- պանություն	Նոյեմբեր 2011	Երեւանի և Հրազդանի ակտի- վիստների համա- դրություն	Դադարեցված
«Արամի խաչմերուկ» քաղաքացիական նախաձեռնություն	Մշակութային պահպանություն	Նոյեմբեր 2011	Երեւան	Դադարեցված
«Բացօթյա առևտրով զբաղվող անձանց աշխատանքային իրավունքների պաշտպանություն»	Մարդու իրավունքներ	Հունվար 2011	Երեւան	Հանգուցա- լուծված (բացասական)
«Կանաչ Կապան» քաղաքացիական նախաձեռնություն- «Մենք դեմ ենք ուրանի բաց հանքի շահագործմանը»	Բնապահ- պանություն	Փետրվար 2011	Կապան	Դադարեցված
«Պահանջելով արժանապատիվ տրասպորտ - Մենք չենք կռանում երթուղայինում»	Մարդու իրավունքներ	Մարտ 2011	Երեւան	Ընթացիկ
«Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնություն	Մարդու իրավունքներ	Ապրիլ 2011	Երեւան	Ընթացիկ
«Պահանջում ենք գիտության ֆինանսավորման ավելացում»	Գիտական, կրթական	Ապրիլ 2011	Երեւան	Ընթացիկ

«Պահանջում ենք վերադարձնել Մինաս Ավետիսյանի որմանկարները»	Մշակութային պահպանություն	Հունիս 2011	Գյումրի	Հանգուցալուծված (բացասական)
«SOS! Պահպանենք Աֆրիկյանների ակումբի դեմքը»	Մշակութային պահպանություն	Հունիս 2011	Երեւան	Ընթացիկ
«Արդարություն Վերնիսաժի առևտրականների համար»	Մարդու իրավունքներ	Օգոստոս 2011	Երեւան	Դադարեցված
«Փրկենք Դուկաս Գուբարյանի տունը ռջնացումից»	Մշակութային պահպանություն	Օգոստոս 2011	Երեւան	Դադարեցված
«Խոսքովի արգելոց» քաղաքացիական նախաձեռնություն	Բնապահպանություն	Հոկտեմբեր 2012	Երեւան	Դադարեցված
«Մաշտոցի պուրակ» քաղաքացիական նախաձեռնություն	Հանրային պուրակներ, կանաչ տարածքներ	Փետրվար 2012	Երեւան	Հանգուցալուծված (դրական)
«Փրկենք Փակ շուկան» քաղաքացիական նախաձեռնություն	Մշակութային պահպանություն	Մայիս 2012	Երեւան	Ընթացիկ
«Պահանջում ենք պատժել Հարսնաբարում տեղի ունեցածի բոլոր մեղավորներին» և «Վահե Ավետյան» հասարակական շարժում	Մարդու իրավունքներ	Հունիս 2012	Երեւան	Ընթացիկ
«Վերա-իմաստավորելով Մարտի 8-ը»	Կանանց իրավունքներ	Մարտ 2013	Երեւան	Ընթացիկ
«Զենք լռելու» քաղաքացիական նախաձեռնություն	Իրավունքների պաշտպանություն եւ անարդարության դեմ պայքար	Անորոշ	Անորոշ	Ընթացիկ
«Մենք չենք վճարելու 150 դրամ» քաղաքացիական նախաձեռնություն	Հանրային/ քաղաքացիական իրավունքներ	Հունիս 2013	Երեւան	Ընթացիկ

Պատկեր 1. Քաղաքացիական նախաձեռնություններ. թիրախային խնդիրներ



Պատկեր 2. Քաղաքացիական նախաձեռնություններ. վայր



Ինչու՞ են ծնվում քաղաքացիական նախաձեռնությունները

2010 թվականից ի վեր քաղաքացիական նախաձեռնությունների աճը եւ ծավալումը պարտական է երեք գործոնի: Առաջին՝ հայաստանցիների առաջին հետխորհրդային սերնդի չափահասության տարիքին հասնելը նշանակում էր, որ կա հայաստանցիների մի սերունդ, որը չի ապրել խորհրդային շրջանի ընթացքում, ուստի ոչ միայն ունի տարբեր աշխարհայացք, այլև հասակ առնելով նորագատական (սեռլիբերալ) համատեքստում, որտեղ երեք գոյություն չի ունեցել ուժեղ համընդհանուր բարեկեցության պետություն, տարբեր ակնկալիքներ եւ ըմբռնումներ ունի պետության եւ քաղաքացիների հետ նրա փոխհարաբերության մասին: Ի տարբերություն հայաստանցիների ավելի ավագ սերունդների, որոնք այնպես են. «դա պետք է անի պետությունը», նրանք պետությունից որևէ նման սպասելիք չունեն: Որպես այդպիսին, նրանք որդեգրում են ավելի գործուն մոտեցում հասարակության իրազեկվածության բարձրացման եւ խնդիրների հասցեագրման նկատմամբ՝ հանրային զբոսայգիները մաքրելուց մինչև հանրային տրանսպորտից օգտվող քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը:

Երկրորդ՝ սոցիալական մեդիայի, այդ թվում՝ Ֆեյսբուքի եւ Յություբի, մուտքը եւ տարածումը, ինչպես նաեւ լայնաշերտ տեխնոլոգիայի ավելի մեծ հասանելիությունը եւ ֆինանսական առումով մատչելիությունը, որ թույլ է տալիս տեսանյութերի վերբեռնումը եւ կենդանի հաղորդումը (Live Streaming), քաղաքացիական ակտիվիստներին շատ ավելի արդյունավետ եւ արագ կազմակերպման եւ մոբիլիզացման հնարավորություն ընձեռեց: Արաբական գարնան եւ այլ շարժումների ակտիվիստների կողմից լայնորեն օգտագործվել է սոցիալական մեդիան եւ շարժական կապը (Castells, 2012, Mason, 2013), եւ իրոք, Հայաստանում եւս ներքեւից ձեւավորված քաղաքացիական նախաձեռնությունները մեծ չափով օգտագործում են սոցիալական մեդիան իրենց գործողություններում՝ հասնելով ջանքերի համատեղման եւ զուգակցման թե՛ վիրտուալ, թե՛ ֆիզիկական տիրույթներում: Այժմ Ֆեյսբուքը Հայաստանում ունի ավելի քան 350 000 բաժանորդ, ու թեեւ սա երկրի 3,1 միլիոն բնակչության միայն 11,5%-ն է, այստեղ ակտիվություն ունեցողները բնակչության երիտասարդ հատվածն են կազմում, եւ նրանց թիվն աճում է:

Չնայած հաղորդակցության այս նոր գործիքների եւ տեխնոլոգիաների մատչելիությունը օգնում է կազմակերպմանը, մոբիլիզացմանը

եւ հավաքական գործողությանը, մենք պետք է նաեւ զգույշ լինենք՝ չհափազանցելու դրանց ազդեցությունը, այն դեպքում, երբ կան փաստեր, որ սոցիալական տեղեկատվամիջոցները ծառայել են նաեւ որպես կառավարության վերահսկողության եւ անգամ սադրանքի միջոց (Morozov, 2011, Center for Liberation Technology, 2010): Օրինակ՝ ակտիվիստ Եղիա Ներսիսյանի՝ հանքարդյունաբերության մասին (2012թ. դեկտեմբեր) տեղի ունեցած հրապարակային ելույթը Լոս Անջելեսի հայ համայնքի մի խմբի համար, նկարահանվել էր: Ներսիսյանի մեկնաբանությունները Կապանի հանքագործների աշխատանքային պայմանների մասին մղեց «Դինո-Գոլդ մայնինգ» ընկերությանը՝ դատական գործ հարուցել Նրա դեմ՝ զրպարտության համար («ԷկոԼուր», 2013թ., Tert.am, 2013թ.): Տեղի ունեցան հակացույցեր (counter-protests), որի ժամանակ ակտիվիստները հրապարակայնորեն կրկնեցին Ներսիսյանի պնդումները՝ դրանով իսկ մարտահրավեր նետելով «Դինո-Գոլդին» (որն ամբողջովին պատկանում է կանադական «Դանդի Փրիշրս մեթալս» կորպորացիային) զրպարտության մասին դատական գործեր հարուցել նաև իրենց բոլորի դեմ: «Դինո Գոլդ մայնինգի» կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հարցերով պաշտոնյային ուղղված բաց նամակում ակտիվիստները մեղադրում են ընկերությանը «Հայաստանի քաղաքացիական խմբերին լռեցնելու փորձերի մեջ. Նրանց, ովքեր իրականում պայքարում են բռնատիրական վարչակարգի իշխանության ներքո՝ ազատ խոսքի եւ ժողովրդավարական որոշումների կայացման իրենց իրավունքի համար»: Նամակը ստորագրված է «Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնության», «Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնության եւ «Զերմուկի զարգացման կենտրոն» ՀԿ-ի կողմից (Teghut.am, 2013թ.): 2013թ. հոկտեմբերի դրությամբ գործն ընթացքի մեջ է:

Երրորդ՝ կա հարցի գլոբալ չափումը: 2011 թվականը ամբողջ աշխարհում քաղաքացիական անհնազանդության, բողոքների եւ շարժումների գագաթնակետն էր, որոնք մղվում էին հանուն ժողովրդավարության եւ ընդդեմ խստացումների (austerity) (Ishkanian և Glasius, 2013): 2011 թվականին խստացումների դեմ ուղղված գլոբալ շարժման (ինչպես, օրինակ, «Occupy Wall Street»-ը, «Indignados»-ը Իսպանիայում եւ այլն) եւ Արաբական գարնան՝ հանուն ժողովրդավարության շարժումների հետ միասին, տեղի էր ունենում նաեւ քաղաքացիական ակտիվության աճ որոշ նախկին խորհրդային երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, Մոլդովայում, Ռուսաստանում, Վրաստանում եւ Ուկրաինայում (Lutsevych, 2013, Dyczok, 2013, Kokichaishvili, Stop Destroying Gudiashvili Square, 2011, Faryna, 2012, Nikitin, 2010, Ishkanian,

Forthcoming): Քաղաքացիական նախաձեռնությունները, որ 2011 եւ 2012 թվականներին ի հայտ եկան նախկին խորհրդային երկրներում, որոշակի նմանություններ ունեն ամբողջ աշխարհում տեղի ունեցող խստացումների դեմ եւ հանուն ժողովրդավարության շարժումների հետ, այնքանով, որքանով որ առաջ են մղվում «ժողովրդավարության, դրա պրակտիկաների եւ ամենօրյա կյանքի հետ դրա հարաբերության հավաքական վերաբերակայմամբ» (Kaldor and Selchow, 2012): Ընդդեմ խստացումների եւ հանուն ժողովրդավարության շարժումները, որ վերջին տարիներին ի հայտ եկան մոլորակի տարբեր մասերում, գայրույթի արտահայտություն են եւ առաջ են քաշում ժողովրդավարության, սոցիալական արդարության եւ արժանապատվության անբավարար վիճակին վերաբերող մտահոգություններ (Glasius and Pleyers, 2013, Ishkanian and Glasius, 2013):

Թեեւ խստացումների հարցն ինքնին Հայաստանի քաղաքացիական նախաձեռնությունների կողմից չի բարձրացվում (ընդհանրապես ասած՝ բանի որ խստացումը Նոր բան չէ Հայաստանում, եւ պետական ծախսերի ու դրամական հատկացումների կրճատումներն արդեն իսկ տեղի են ունեցել վերջին քսան տարվա ընթացքում, այն ժամանակից ի վեր, երբ ներմուծվեցին որպես 1990-ականների սկզբի այսպես կոչված շոկային թերապիայի մաս), այդուհանդերձ, այդ նախաձեռնությունների շարժիչ ուժը ցանկությունն է՝ առաջ քաշելու ժողովրդավարության պակասի, տիրապետող կոռուպցիայի եւ օլիգարխային կապիտալիզմի, ինչպես նաեւ որոշումների ընդունման մեջ հաշվետվողականության եւ թափանցիկության բացակայության հարցերը: Ավելին, որոշ քաղաքացիական նախաձեռնություններ, ինչպես «Փրկենք Մաշտոցի պուրակը», բացահայտորեն նույնականացրին իրենց որպես “occupy” գլոբալ շարժման մաս (Wikipedia, 2013, Poghosyan, 2012) եւ օգտագործում էին “99%”-ի դիսկուրսն ու ձեւակերպում Մաշտոցի պուրակում կրպակներ կառուցելու դեմ իրենց բողոքը Նոր-ազատականության ավելի լայն քննադատության լեզվով:

Հետեւաբար, թեեւ քաղաքացիական նախաձեռնություններն առաջ են քաշում խիստ որոշակի եւ երբեմն էլ շատ Նեղ շրջանակ ունեցող հարցեր (օրինակ՝ փրկել մեկ հանրային այգի), դրանց առաջ գալը պայմանավորված է շատ ավելի ընդարձակ մտահոգություններով (եւ որոնց արտահայտությունն են հենց այդ նախաձեռնությունները): Կոռուպցիա, օրենքի գերակայության բացակայություն, ժողովրդավարության պակաս, օլիգարխային կապիտալիզմի առաջացում եւ պաշտոնական քաղաքական վերնախավի ձախողում՝ հասցեագրելու

Հայաստանի սովորական քաղաքացիների մտահոգությունները: Օրինակ՝ «Փրկենք Մաշտոցի պուրակը» քաղաքացիական նախաձեռնության դեպքում անմիջական նպատակը զբոսայգին փրկելն էր կրպակների կառուցման նպատակով բեռոնապատումից, բայց ավելի ընդարձակ նպատակներն ու խնդիրներն էին. զարգացնել մի օրակարգ, որը քաջալերում է քաղաքացիական մասնակցությունը, օրենքի գերակայության նկատմամբ հարգանքը ու կայուն զարգացումը (Wallace, 2012) եւ առաջ քաշում «օլիգարխիայի» հարցը, որոնց ակտիվիստները անվանում էին «օրենքից վեր մարդիկ», որոնք, ունենալով տնտեսական եւ քաղաքական ռեսուրսներ, սեփական շահը վեր են դասում ժողովրդի շահից (Wikipedia, 2013):

Այս նպատակներին հետամուտ՝ «Փրկենք Մաշտոցի պուրակը» նախաձեռնության ակտիվիստները կազմակերպեցին «քաղաքացիական արդար եւ անկախ դատարան», որում նրանք քննության առան կրպակների կառուցման օրինականությունը (Մարդու իրավունքների եւ ժողովրդավարության ինստիտուտ, 2013թ.): Մինչեւ «քաղաքացիական դատարան» կազմակերպելը, ակտիվիստները բազմաթիվ փորձեր էին ձեռնարկել՝ հանդիպելու Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ եւ այնպես անելու, որ իրենց հարցը լսվի դատարանում: Իշխանությունների «անգործությունը» արձանագրելուց հետո, 2012 թվականի մարտի 13-ին գումարվեց «քաղաքացիական դատարան» հետեւյալ լիազորությամբ. «Քննել հանրային ունեցվածքի եւ ազգային հարստության զավթման, կողոպտման, մասնավորեցման հիմնախնդիրը մեր պետությունում» (Մարդու իրավունքների եւ ժողովրդավարության ինստիտուտ, 2012թ.) (ընդգծումը՝ սկզբնաղբյուրում):

Առաջին հատվածում ասված է.

Մենք՝ ՀՀ քաղաքացիներս ու քնակիչներս², կենսագործում ենք մեր Սահմանադրական իրավունքն ու պարտականությունը եւ լինելով այս հանրային տարածքի ու սեփականության տերը, մեր քաղաքի եւ պետության տերը՝ պահանջել ենք մեր ծառայողներից՝ քաղաքային եւ այլ մարմինների ներկայացուցիչներից, կատարելու իրենց Սահմանադրական գործառույթներն ու պարտականությունները, որի համար էլ վճարվում են հանրության կողմից: Մեր հստակ ու օրինական պահանջներին նրանք արդեն ինչքան ժամանակ է որեւէ հստակ եւ իրավական պատասխան չեն

2. Այստեղ «քնակիչներ» բառը վերաբերում է հայրենադարձ սփյուռքահայերին, որոնք, սակայն, չունեն Հայաստանի քաղաքացիություն:

տալիս, այլ խուսափում են, փորձում են խճճել կամ երկարաձգել գործընթացը (Մարդու իրավունքների եւ ժողովրդավարության ինստիտուտ, 2012թ.):

«Զաղաքացիական արդար եւ անկախ դատարանում» ընդունված «վճիռը» հաստատեց, որ քաղաքային իշխանությունը պարտավոր է ապամոնտաժել կրպակները եւ վերականգնել պուրակն իր նախկին տեսքով՝ ավելացնելով, որ եթե այս «վճիռը» չիրականացվի 10 օրվա ընթացքում, ակտիվիստներն իրենք կսկսեն ապամոնտաժել կրպակները: Հետեւելով «վճիռին»՝ ակտիվիստները շարունակեցին խոչընդոտել շինարարական աշխատանքը: Սակայն, սկսած 2012թ. մարտի վերջից, մի խումբ միջին տարիքի, հիմնականում տղամարդ ակտիվիստներ (ովքեր իրենց անվանում էին «ապամոնտաժողների բրիգադ») սկսեցին այցելել Մաշտոցի պուրակ՝ որպես նպատակ հռչակելով ակտիվիստներին օժանդակելն ու կրպակներն ապամոնտաժելը: Կրպակները քանդելու «ապամոնտաժողների բրիգադի» փորձերը կասեցվեցին ոստիկանության կողմից:

Մինչ այժմ քաղաքացիական նախաձեռնությունները ո՛րք ակտիվորեն փորձել են կապեր հաստատել, ո՛րք էլ ֆինանսական աջակցություն ստանալ միջազգային դոնորներից: Ընդհակառակը, նրանք վճռականորեն հեռու են մնում օտարերկրյա դոնորների հետ հարաբերություններից, որպեսզի խուսափեն այն ընկալումներից, թե նրանց շարժառիթը դրամաշնորհներն են, թե նրանք կառավարվում են արտաքին ուժերի կողմից կամ թե վարկաբեկված են օտարերկրյա ֆինանսավորմամբ:

Զաղաքացիական նախաձեռնությունների մարտավարությունը՝ մերժելու արտաքին դոնորների դրամաշնորհները, ռազմավարական եւ քաղաքական որոշում է, որի նպատակն է մեծացնել իրենց վստահելիությունն ու լեգիտիմությունը հանրության աչքին եւ խուսափել պնդումներից, թե նրանք «գրանտակերներ» են: Օրինակ՝ մի բնապահպան ակտիվիստ ինձ ասաց.

Մենք ցանկանում ենք, որ սա լինի ներքեւից-վերեւ շարժում: Սա վերաբերում է հայերին՝ որպես ինքնորոշված քաղաքացիների: Մենք չենք ուզում դրամաշնորհներ եւ դրամաշնորհների կարիք չունենք: Ավելին, մենք չենք վստահում միջազգային ՀԿ-ներին եւ դոնորներին: Նրանք շատ երկար ժամանակ լուռ են մնացել շրջակա միջավայրի չարաշահման, կոռուպցիայի եւ Հայաստանում

կատարվող այլ չարաշահումների մասին: Մենք չենք հավատում, որ հիմա նրանք կփոխվեն (հարցազրույց Սթայփոլ, հունվարի 10, 2013թ.):

Քննադատների, այդ թվում՝ որոշ պետական պաշտոնյաների ու կորպորացիաների ներկայացուցիչների, պնդումները, թե ակտիվիստների խթանը դրամաշնորհներ ստանալու ցանկությունն է, իրականում ոչ մի փաստով չեն հիմնավորվում: Ընդհակառակը, ակտիվիստներին «գրանտակեր» պիտակ կպցնելու փորձերը, ինչպես պարզ է դառնում, ուշադրությունը շեղելու մարտավարություն է: Այն գործադրվում է մարդկանց ուշադրությունը տվյալ հարցից (այն է՝ հանքարդյունաբերությունից) շեղելու համար՝ փոխարենը հարցականի տակ դնելով ակտիվիզմի դրդապատճառները: Այս ռազմավարությունը՝ տեղափոխելու ուշադրությունը հաղորդումից հաղորդողի վրա, նպատակ ունի հարցեր բարձրացնել նրանց ջանքերի ազնվության, անկաշառության ու օրինականության մասին: Իրոք, ինչպես մի ՀԿ-ի անդամ հարցվող ասաց,

Մաշտոցի պուրակից հետո կառավարությունը հասկացավ, որ հանրությունը սկսում է դրականորեն արձագանքել ակտիվիստների նոր խմբերին եւ ողջունել նրանց համառությունն ու քաջությունը: Ուստի հիմա այն կազմակերպված արշավ է սկսել՝ վարկաբեկելու ակտիվիստներին եւ նրանց «գրանտակերի» կամ մեկ ուրիշ պիտակ կպցնելու ուղղությամբ (հեղինակի հարցազրույցը, հոկտեմբերի 10, 2012թ.):

Դրամաշնորհներից խուսափելուց բացի, «Փրկենք Մաշտոցի պուրակը» նախաձեռնության ակտիվիստները նաեւ քննադատեցին որոշ միջազգային կազմակերպությունների այն բանի համար, որ նրանք լուրջության մատնեցին իշխանությունների կողմից կոպիտ միջոցների կիրառումը պուրակում բողոքողների նկատմամբ: Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությանը (ԵԱՀԿ) ուղղված բաց նամակում նրանք գրում են. «Մենք կտրուկ անհամաձայնություն ենք հայտնում (Մաշտոցի³) պուրակում կատարված բողոքների առնչությամբ ոստիկանության գործողությունների վերաբերյալ ԵԱՀԿ-ի ներկայացուցիչների գնահատականի հետ», ավելացնելով.

Ձեզ եւ կազմակերպության (ԵԱՀԿ) մյուս կառույցներին ու ներկայացուցիչներին կոչ ենք անում վերանայել այն արատավոր

3. Ծանոթությունը հեղինակի:

պրակտիկան, երբ կազմակերպության առանձին կառույցներ կամ ներկայացուցիչներ, անհամարժեք եւ անզգույշ հայտարարություններ անելով կամ որոշումներ ընդունելով, խթան են հանդիսանում, որպեսզի ուժային կառույցները բռնություն գործադրեն հասարակության անդամների նկատմամբ (Մաշտոցի պուրակում) (HETQ, 2012, ընդգծումը հեղինակի):

Միջազգային կազմակերպությունների այսպիսի բացահայտ եւ հրապարակային քննադատությունը Հայաստանի ՀԿ-ների շրջանում չսլաված բան է, որտեղ «մի խփիր այն ձեռքին, որը կերակրում է քեզ» սկզբունքը ճշմարտության կարգավիճակ ունի: Ես հարցազրույցներ ունեցա Հայաստանում գործող որոշ միջազգային կազմակերպությունների ու արտաքին դոնորների հետ, որոնք սովորաբար աշխատում են ՀԿ-ների հետ դոնոր-նպաստառու փոխհարաբերությամբ: Նրանք նշեցին, որ քաղաքացիական նախաձեռնությունների դեպքում իրենց վերապահված է դիտորդի դեր: Մի արտաքին դոնոր կազմակերպության ներկայացուցիչ ասաց ինձ. «Մենք մեծ հետաքրքրությամբ նայում ենք այն ամենին, ինչ կատարվում է : Բայց մենք վստահ չենք այն հարցում, թե ինչպես պետք է վերաբերել ակտիվիստներին» (12 մայիսի, 2012թ.): Մեկ այլ դոնոր նկատեց. «Նրանք (քաղաքացիական ակտիվիստները) ունեն շատ եռանդ եւ ոգեւորություն, բայց պարզ չէ, թե նրանք ինչի կկարողանան հասնել» (10 մայիսի, 2012թ.):

Այդուհանդերձ, հստակ է, որ նրանց աշխատանքը գրավում է Հայաստանում գործող դոնոր համայնքի ուշադրությունը: Օրինակ՝ 2012թ. հունիսին ԱՄՆ պետական քարտուղար Յիլարի Զլինթոնը միացավ Հայաստանում ԱՄՆ եւ Բրիտանական դեսպանատներին, ինչպես նաեւ Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավարին ու «Քաունթերփարթ Ինթերնեշնլ» ՀԿ-ին՝ «շեշտելու Հայաստանի քաղաքացիական իրավունքների ակտիվիստների ներդրումները մարդու իրավունքներին աջակցելու գործում»՝ նրանց արժանացնելով «Համընդհանուր իրավունքների» մրցանակին (Embassy of United States, 2012): Համաձայն Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Տրայան Յրիստեայի՝ «Փրկենք Մաշտոցի պուրակը» քաղաքացիական նախաձեռնության մեջ ներգրավված ակտիվիստներին այդ մրցանակը տրվել է ի նշան նրանց «հանձնառության եւ անկոտրուկ կամքի» ճանաչման, ինչը հանգեցրեց «շրջակա միջավայրի համար կարելի է հաղթանակների»: Շարունակելով Յրիստեան ասաց. «Այս մրցանակով մենք ցանկանում ենք ոչ միայն պատվել նրանց աշխատանքը, այլեւ աջակցել նրանց ապագա ջանքերին Հայաստանում» (Embassy of United States, 2012):

Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը եւ
ընապահականական ակտիվիզմը հայաստանում

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՃԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԻԶՄԻ ՆՈՐ ԱԼԻՔԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Խորհրդային շրջանում հանքարդյունաբերությունը Հայաստանում լիովին վերահսկվում եւ կարգավորվում էր Մոսկվայի կենտրոնական իշխանության կողմից (Kursky and Konoplyanik, 2006): Բայց, սկսած 1999 թվականի հոկտեմբերից՝ Հայաստանի կառավարությունը հաստատեց «երկրի գունավոր մետաղների արդյունաբերության վերականգնման եւ զարգացման ծրագիր՝ այդ նպատակի համար նախատեսելով 508 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում 2000-2010թթ. ժամանակահատվածում» (Rumin, 2000): Այժմ, Հայաստանը մոլիբդենի գլխավոր արտադրողներից մեկն է, աշխարհում՝ յոթերորդը: Մոլիբդենից բացի, Հայաստանը արտադրում է նաեւ պղինձ, ոսկի, կապար, արծաթ եւ ցինկ, ինչպես նաեւ լեռնային ապարներ՝ այդ թվում բազալտ, դիատոմիտ, գրանիտ, գիպս, կրաքար եւ պեռլիտ (Levine and Wallace, 2009, էջ 7.2): Ունենալով կոշտ օգտակար հանածոների ավելի քան 670 հանքավայր (տես քարտեզը՝ Հավելվածում)⁴ այդ թվում 30 մետաղական (Հայաստանի Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն, 2013), այլ գնահատականներով 26 (ՀՀ Իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի գործակալություն 2013), եւ միեւնույն ժամանակ «ամենազատական առեւտրային օրենսդրությունը նորանկախ (խորհրդային) պետությունների շրջանում» (Mining Journal, 2011, էջ 9) Հայաստանն իր կողմն է գրավել բազմաթիվ օտարերկրյա ներդրողների, որի շնորհիվ անցած տասնամյակի ընթացքում հանքարդյունաբերության սեկտորն արագորեն ընլայնվել է:

«Հանքարդյունաբերության համար բարենպաստ» օրենսդրությունը եւ կարգավորման մեխանիզմները ներառում են «մեղմ» հարկման համակարգ, «ոչ մի սահմանափակում կապիտալի եւ եկամուտների կոնվերտացման կամ սկզբնական երկիր վերադարձման վրա», ինչպես եւ «ոչ մի սահմանափակում փողի էլեկտրոնային փոխանցման (wire transfer) նկատմամբ» (Mining Journal, 2011, էջ 9): Բացի այդ, Հայաստանում հարկեր չեն գանձվում արտահանումից եւ չկան սահմանափակումներ օտարերկրյա աշխատակիցների թվի վերաբերյալ (Mining Journal, 2005, էջ 6):

Ներկայումս օտարերկրյա ներդրողները վերահսկում են Հայաստանի հանքարդյունաբերության «նշանակալի բաժինը» եւ Հայաստանի մի շարք հանքեր օտարերկրյա ընկերությունների սեփականությունն են (Safirova, 2012) (տես Աղյուսակ 2, էջ 85): Համաձայն հանրայնորեն մատչելի

4. Քարտեզում, որը հատուկ այս գեկույցի համար պատրաստել են Հայաստանում «Թրանսփարենսի ինթերնեշլ» հավակոռուպցիոն կենտրոնի փորձագետները, պատկերված են Հայաստանի հանքավայրերը, դրանց թիվն ու տեղը:

տեղեկատվության՝ հանքերի մնացած մասը պատկանում է տեղական տնտեսական եւ քաղաքական վերնախավին (մասնավորապես՝ օլիգարխներին): Ինչպես ասաց մի բնապահպան ակտիվիստ.

Ես չեմ կարծում, թե մեր կառավարության պաշտոնյաները այդքան հիմար են, որ թույլ տան, որ օտարները տանեն Հայաստանի ոսկին, արծաթը եւ մյուս մետաղները, իսկ իրենք դրանից շահ չունենան: Սա նշանակում է, որ նրանք եւս ներգրավված են այս թալանի մեջ: Հենց այդպես էլ կա (հեղինակի հարցազրույցը, հոկտեմբերի 12, 2012թ.):

Հանքերի սեփականատերերի մասին տեղեկատվության թափանցիկության և հանրայնության բացակայությունը շատ խնդրահարույց է հաշվետվողականության տեսանկյունից: Օրինակ, եթե առաջնան խնդիրներ, ապա, տեղեկատվության բացակայության պայմաններում հասկանալի չէ, որ կազմաբերպությունն (ները) է կրում պատասխանատվություն: Աղյուսակ 2-ում (էջ 85) ներկայացնում ենք 26 հանքերի սեփականատերերի ու գրանցման մասին տեղեկատվություն, որը ձեռք է բերվել ՀՀ իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի գործակալությունից՝ տեղեկատվության ազատության հարցման արդյունքում: Քանի որ գործակալությունից ստացված տեղեկատվությունը տարբեր է հանքարդյունաբերական ընկերությունների կայքերում հասնալի տեղեկատվությունից, մենք որոշեցինք ներառել երկուսն էլ:

Բացի օտարերկրյա ուղղակի ներդրումներից, Հայաստանում իրականացվող հանքարդյունաբերական նախագծերը օժանդակվում են նաեւ միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից՝ ինչպիսին օրինակ, Համաշխարհային բանկն ու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը: «Հանքարդյունաբերության ոլորտը Հայաստանում» զեկույցի (2011թ.) նախաբանում Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար պարոն Արմեն Մովսիսյանն ասում է.

Այսօր Հայաստանը՝ որպես անկախ պետություն, պատրաստ է բավարարել մետաղների եւ օգտակար հանածոների համաշխարհային պահանջարկը... Քանի որ օգտակար հանածոների արդյունահանումը եւ հանքարդյունաբերությունը Հայաստանի տնտեսության շատ կարեւոր ոլորտ է, մեր երկրի համար կարեւոր է պահպանել «հանքարդյունաբերության համար բարենպաստ» իր կարգավիճակը: Այդ կարգավիճակը պահպանելու եւ բարելավելու

համար Հայաստանի կառավարությունը կատարելագործում է երկրի հանքարդյունաբերության ոլորտի օրենսդրական դաշտը Համաշխարհային բանկի եւ Եվրոպական փորձագետների հետ միասին (Հայաստանի Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն, 2011թ.) (ընդգծումը հեղինակի):

Օրենսդրական դաշտը «կատարելագործելու» քայլը, ավելացնում է Մովսիսյանը, նպատակ ունի «օգնել էլ ավելի շատ ներդրումներ ներգրավել հանքարդյունաբերության ոլորտ, որին վիճակված է մեծ դեր խաղալ Հայաստանի տնտեսական զարգացման մեջ» (Հայաստանի Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն, 2011թ.):

Հարկ է նշել, որ այս հարցում Հայաստանը միակը չէ, որ բազմաթիվ այլ զարգացող երկրների նման խրախուսվել է միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից՝ «կատարելագործելու» երկրի հանքարդյունաբերական օրենսդրությունը: Գլոբալ մասշտաբով սեփական հանքարդյունաբերության օրենքները բարեփոխելու կամ կատարելագործելու գործընթացը սկսվել է 1980-ականներին եւ ընդլայնվել 1990-ականներին ու 2000-ականներին: Այս ընթացքում հանքարդյունաբերությունը սկսեց տեղաշարժվել «գլոբալ հյուսիսից» դեպի «գլոբալ հարավ»⁵, քանի որ օտարերկրյա ներդրողներին, որոնք ձգտում էին մեծացնել իրենց համեմատական առավելությունը, գրավում էին զարգացող երկրների ոչ այնքան խիստ բնապահպանական բաղաբաղականություններն ու կարգավորման շրջանակները (Dougherty, 2011, էջ 97): Այդուհանդերձ, ինչպես ակնուրբ է Գլեն Ջուեքերը, այս բարեփոխումները հաճախ «խորապես ոչ ժողովրդավարական» էին, եւ երբեմն զարգացող երկրների բարեփոխված հանքարդյունաբերության օրենքները բազմազգային կորպորացիաներին թույլ էին տալիս գործել այնպիսի եղանակով, որ Նրանց սեփական երկրներում կհամարվեին **անօրինական** (Kuecker, 2007, էջ 97):

Հանքարդյունաբերության օրենքները Հայաստանում «կատարելագործվել» են 2011թ. վերջին: Նոր «Ընդերքի մասին օրենսգիրքը», որը ուժի մեջ մտավ 2012 թվականի հունվարի 1-ին, մի շարք պատճառներով բնաաղատության է արժանացել բնապահպան գործիչների կողմից, ինչպես նկարագրված է ներքևում:

5. «Գլոբալ Հարավ» եւ «գլոբալ Հյուսիս» անվանումները գիտության մեջ հիմնականում օգտագործվում են՝ ավելի շուտ մատնանշելու սոցիալ-տնտեսական ու բաղաբաղական եւ ոչ աշխարհագրական տարբերությունները: Հիմնականում «գլոբալ Հարավի» սահմանումը ներառում է ԱՄՆ-ն, Եվրոպան, Կանադան, Ավստրալիան, Իսրայելը, Ճապոնիան եւ այլն: Միևնույն ժամանակ «գլոբալ Հյուսիսը» կազմված է զարգացող երկրներից Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում եւ Ասիայում:

1. Բնական պաշարների գնահատումը

Նախկինում, համաձայն 2003 թվականի Կոնցեսիոն օրենքի, հանքարդյունահանման լիցենզիաներ ունեցողներից գանձվում էր 1,3 - 1,5% շրջակա միջավայրի շահագործման վճար, Նրանք **Նաեւ** պարտավոր էին մետաղական օգտակար հանածոների վաճառքից ստացված համախառն զուտ ներհոսքից վճարել 1% ռոյալթի, ինչպես նաեւ լրացուցիչ ռոյալթի, որը գանձվում էր 0,1%-ից մինչև առավելագույնը 0.8%՝ 25% շահութաբերության գործակիցը գերազանցելու դեպքում (Mining Journal, 2005, էջ 7): Ընդերքի շահագործման այս վճարն արդեն իսկ ամենացածրերից մեկն էր աշխարհում: Օրինակ՝ Ռուսաստանում վճարները կազմում են 3.8 – 8.3%, մինչդեռ Կանադայում դրանք 10 – 16% են (Գրիգորյան, 2011թ.): Համաձայն 2012 թվականի Ընդերքի մասին օրենսգրքի՝ ընդերքի շահագործման վճարն ընդհանրապես վերացվել է: Փոխարենը ընկերությունները ներկայումս պատասխանատու են միայն ռոյալթիի վճարան համար, որը հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով.

$$R = 4 + [P/(I \times 8)] \times 100$$

R = ռոյալթիի տոկոսադրույթը

P = շահույթը հարկումից առաջ ՀՀ դրամով

I = արտադրանքի իրացումից ստացված եկամուտը ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ

Ըստ էության, սա նշանակում է, որ ընկերությունները հարկվում են միայն արտադրանքի վաճառքի, այլ ոչ թե արդյունահանվող բնական պաշարների չափով: Ինչպես պնդում են քննադատական գործիչները (campaigners)՝ սա ստեղծում է լուրջ կոռուպցիոն ռիսկեր: Իրավաբան Էրիկ Գրիգորյանը գրում է. «Սա նշանակում է, որ եթե Նույնիսկ պղնձի միջազգային գինը բարձրանա մինչեւ 10 000 ԱՄՆ դոլար մեկ տոննայի համար, բայց արդյունահանող կազմակերպությունը, ցանկանալով նվազագույնի հասցնել իր հարկային հիմքը, օգտակար հանածոները կվաճառի մի քանի անգամ ավելի ցածր գնով՝ հարկերի հաշվարկման միակ հիմքը ընդունելով գնման եւ վաճառքի պայմանագրերը (Գրիգորյան, 2011թ.): Գրիգորյանը պնդում է, որ ռոյալթիները չպետք է փոխարինեն ընդերքի շահագործման վճարներին, այլ պետք է լինեն «հավելյալ» եւ որ ընդերքի շահագործման վճարները պետք է հաշվվեն «ըստ շրջակա միջավայրին եւ հանրային առողջությանը հասցրած իրական վնասի» (Գրիգորյան, 2011թ.):

2. Հանքարդյունաբերական թափոնների սահմանումը եւ կառավարումը

Համաձայն 2012 թվականի «Բնապահպանական վճարների դրույթաչափերի մասին օրենքի»՝ կա թափոնների 7 կատեգորիա: Այդ յոթից չորսը դասակարգված են որպես վտանգավոր: Թափոնները, որոնք դասակարգված են որպես Առաջին մակարդակի, առավել վտանգավորն են, եւ դրանց մեկ տոննայի համար պահանջվում է վճարել 48 000 դրամ (117 ԱՄՆ դոլար)⁶: Մինչդեռ, այն թափոնների մեկ տոննայի համար, որոնք դասակարգված են որպես Յոթերորդ մակարդակի, նախատեսված է զրո դրամ վճար: Ինչպես պնդում է իրավաբան Արթուր Գրիգորյանը⁷, ինդիքսն այն է, որ 2012 թվականի «Ընդերքի մասին օրենսգրքից» դուրս է թողնված «թափոն» բառը (հարցազրույց Արթուր Գրիգորյանի հետ, 2013թ.): Այն փոխարինվել է «լցակույտ» բառով (International Business Publications, 2013, էջ 31, Գրիգորյան, 2011): Համաձայն Հակոբ Սանասարյանի, որն ամենափորձառու բնապահպան գործիչներից մեկն է եւ Հայաստանի կանաչների միության նախագահը, այս դուրսթողումն իսկապես նշանակում է, որ «հանքարդյունահանման հետեւանքով առաջացած թափոնները չեն հարկվում»: Օրենսդրությունն արձանագրում է, որ մեկ տոննա թափոնի հարկը հավասար է զրո դրամի: Հարցը մի քանի անգամ քննարկվել է կառավարությունում, բայց ոչինչ չի փոխվել (Tert.am, 2012թ.): Ինչպես բացատրում է Արթուր Գրիգորյանը.

Համաձայն «Ընդերքի օրենսգրքի 14-րդ հոդվածի»՝ հանքարդյունաբերության արդյունքում առաջացած թունավոր թափոնները, դառնում են պետության սեփականությունը, և հանքարդյունահանող ընկերությունները որևէ պատասխանատվություն չեն կրում պոչամբարների անվտանգությունն ապահովելու համար: Եւ ոչ միայն դա. հանքարդյունահանող ընկերությունները պոչամբարների պահպանության համար վճար հատկացնելու որևէ պատասխանատվություն չեն կրում (հարցազրույց Արթուր Գրիգորյանի հետ, 2013):

Փոխարենը, ինչպես նշում է մի գիտնական-փորձագետ, «Հանքարդյունաբերության օգուտները սեփականաշնորհված են, մինչդեռ ծախսերը՝ սոցիալականացված, եւ այն իր վրա է կրում հանրությունը (հեղինակի հարցազրույցը Սթայփոլ, Նոյեմբերի 1, 2012թ.):

6. Այս գեկույցում արտաբծույթի փոխարկումները կատարվել են Օանդա վեբկայքի միջոցով. www.oanda.com

7. Ոչ մի առնչություն չունի վերը հիշատակված Էրիկ Գրիգորյանի հետ

Պոլանսների եւ թափոնների կառավարման խնդիրը հեռանկարում պատկերացնելու համար նշենք, որ ներկայումս երկրում կան 16 պոլ-ամբարներ, որոնք զբաղեցնում են մոտ 700 հեկտար ընդհանուր տարածք (Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն, 2013թ.), եւ սա դեռ կավելանա՝ պայմանավորված նրանով, որ ավելի շատ հանքավայրեր են սկսում շահագործվել: 2011 թվականին Հայաստանում արտադրվել է 27,6 միլիոն տոննա թափոն, որի 65%-ը արտադրվել է Սյունիքի մարզում (18147602,7 տոննա), քանի որ ամենամեծ հանքավայրերը գտնվում են երկրի հարավային մասում (Հայաստանի վիճակագրական ծառայություն, 2012թ., էջ 211): Սա նշանակում է, որ հայերի ապագա սերունդները ոչ միայն կբախվեն բնապահական եւ առողջապահական լուրջ ռիսկերի, այլեւ որ նրանք կկրեն հանքարդյունաբերական գործունեության արդյունքում առաջացած թափոնների պահեստավորման եւ պահպանման համար վճարելու բեռը:

Զգտելով արդարացել իրենց ոլորտին տրված արտոնությունները՝ հանքարդյունաբերական ընկերությունները պնդում են, որ իրենք Հայաստան են բերում անհրաժեշտ աշխատատեղեր, ինչպես նաեւ ներդրումներ են կատարում ենթակառուցվածքներ զարգացնելու ուղղությամբ եւ նույնիսկ աջակցում են համայնքներին բարեգործական և սոցիալական պատասխանատվության ծրագրերի միջոցով (Lydian International, 2013, Global Gold CORP., 2013b, Vallex Group, 2013, Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ, 2013): Այդուհանդերձ, բարեգործական և ենթակառուցվածքների այս ծրագրերի շրջանակը, ծավալը եւ սոցիալ-տնտեսական լայն ազդեցությունը պարզ չէ:

Հակառակը, ինչպես արդեն նշվել է, փաստերը վկայում են, որ Հայաստանում աղբատությունը, անհավասարությունը եւ արտագաղթն արմատանում են եւ աճում (Asbarez, 2013, Grigoryan, 2013, Policy Forum Armenia, 2012, «Ազատություն» ռադիոկայան, 2010) եւ հայաստանցիների 35%-ը շարունակում է ապրել աղբատության գծից ներքեւ (World Bank, 2013, Հայաստանի վիճակագրական ծառայություն, 2012թ.): Ըստ պաշտոնական տվյալների՝ գործազրկությունը կազմում է 7%: Բայց այլ աղբյուրներ, ինչպես «Սոցիալական պաշտպանությունը եւ սոցիալական ներգրավվածությունը Հայաստանում» զեկույցը (2011թ.) Հայաստանում գործազրկության մակարդակը գնահատում է 18,7% (Karapetyan et al., 2011):

Ավելին փաստերը վկայում են, որ հանքարդյունաբերությունն արդեն իսկ բացասական ազդեցություն է թողել շրջակա մի-

ջավայրի եւ հանրային առողջության վրա: Օրինակ՝ համաձայն Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնի՝ Հայաստանում հանքարդյունաբերությունն աղետալի հետեւանքներ է ունեցել հանրային առողջության եւ բնապահպանության առումով: Համաձայն դոկտոր Արմեն Սաղաթեյանի, որը Կենտրոնի ղեկավարն է.

Հանքալեռնային արդյունաբերությունը վերջին տասնամյակում աշխատել է առանց վերահսկողության և բարձրորդի վիճակում: ՀՀ օրենսդրությամբ նրանք պարտավոր են չեզոքացնել վտանգավոր թափոնները, սակայն դա չի իրականացվել եւ՝ օբյեկտիվ եւ՝ սուբյեկտիվ պատճառներով, եւ այսօր հողերը սպունգի պես քաշում են այդ թույլները» (Մատինյան, 2011):

Համաձայն կենտրոնի գիտնական փորձագետների՝ հանքարդյունաբերական ընկերությունները զգալի չափով ձախողել են վտանգավոր ախտոտիչների չեզոքացումը, որոնք ներծծվել են հողի մեջ: Բացի այդ, երկրի գյուղական դաշտերը ոռոգվել են հանքարդյունաբերական կազմակերպությունների պատճառով աղտոտված աղբյուրներից հոսող ջրով: Եւ քանի որ այս աղտոտիչները հողից անցնում են գյուղատնտեսական արտադրանքին եւ ապա մարդկանց, լուրջ մտահոգություններ կան հանրային առողջության վերաբերյալ:

Հայաստանի ամերիկյան համալսարանի Հակոբեան բնապահպանական կենտրոնի, Բլաքսմիթ ինստիտուտի եւ Հայաստանի կառավարության երկու նախարարությունների փորձագետների կողմից իրականացված մեկ այլ գիտական ուսումնասիրության ժամանակ գիտնականները հետազոտել են Հայաստանի հինգ մարզում գտնվող 25 տեղանք: Վերցնելով հողի նմուշներ՝ գիտնականները բացահայտել են, որ այդ նմուշներից շատերում՝ հատկապես նրանցում, որոնք վերցվել են գյուղատնտեսական եւ բնակելի տարածքներից, ծանր մետաղների խտությունը բարձր է միջազգայնորեն թույլատրելի առավելագույն մակարդակից: Ընդհանուր առմամբ, ուսումնասիրությունը պարզել էր, որ հանքարդյունաբերական այս համայնքներում պոչամբարները մատնված են անուշադրության՝ առանց համապատասխան ցանկապատման կամ հետեւողական եւ պատշաճ մշտադիտարկման: Բացի այդ, հաղորդումներ են եղել այս վայրերում կատարված վթարների բազմաթիվ դեպքերի մասին, որոնք հանգեցրել են թունավոր թափոնների արտահոսքի: Որոշ դեպքերում լքված պոչամբարները օգտագործվել են որպես արոտավայրեր կամ այգիներ, իսկ երբեմն էլ

քնակիչները պոչանքներն օգտագործել են որպէս շինանյութ (American University of Armenia, 2013):

Հատուկ անդրադառնալով Թեղուտին՝ Հակոբ Սանասարյանը գրում է.

...սակայն այս ծրագիրը ուսումնասիրողները հեշտությամբ կհամոզվեն, որ այս ծրագրում գերակա շահը վերաբերում է հանքավայրը շահագործողին: ...Ինչ վերաբերում է այն հավաստմանը, թե իբր ծրագրի իրականացումը մեծապէս կնպաստի երկրի տնտեսական անվտանգության ամրապնդմանը, ապա սա նույնպէս հիմնավորված չէ: Ավելի քան 3000 գյուղատնտեսական կայուն աշխատատեղին կորուստ պատճառելով, բնակչության կենարար միջավայրն ավերելով, աղտոտելով, ոչնչացնելով, բարեբեր տարածքներն ապրելու համար ոչ պիտանի դարձնելով, ժամանակավոր աշխատատեղեր ստեղծելով, բնական պաշարներն արագընթաց սպառման տանելով ոչ միայն հնարավոր չէ երկրի տնտեսական անվտանգությունն ամրապնդել, այլեւ այդպիսի գործելակերպը ակնհայտորեն բերելու է տնտեսության քայքայման (Սանասարյան, 2012թ.):

Արդեն հինգ տարի է, որ բնապահական ակտիվիստները քարոզարշավ են վարում ոչ միայն մարդկանց առողջության եւ բարեկեցության, շրջակա միջավայրի եւ ապագայի համար հանքարարդյունաբերության ռիսկերի ու վտանգների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ, այլեւ ուշադրություն են հրավիրում այն փաստի վրա, որ այս՝ «հանքարդյունաբերության համար բարենպաստ» ծրագրային քաղաքականությունները թույլ են տալիս, որ կապիտալը, պետական բյուջե մտնելու փոխարեն, հոսի երկրից դուրս: Տնտեսական եւ սոցիալական արդարության տեսանկյունից նրանք պնդում են, որ հակառակ հսկայական շահույթներին, շատ քիչ փող է վերաներդրվել Հայաստանի տնտեսության եւ ենթակառուցվածքների մեջ: Այն փաստը, որ Հայաստանի տնտեսությունն այժմ մեծ չափով կախված է հումքի, այլ ոչ թե պատրաստի բարձրարժեք արդյունաբերական ապրանքների արտահանումից, նշանակում է, որ ընդհանուր տնտեսության համար հանքարդյունաբերության նպաստը եղել է սահմանափակ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նոր մասնավոր ընկերությունները շարունակում են հանքարդյունաբերության բնապահականական հետեւանքներն անտեսելու հին խորհրդային պրակտիկաները եւ որ հանքարդյունաբերությունը դարձել է երկրում կոռուպցիայի խորհրդանշանը (Armenian Tree Project and Zoi Environment Network, 2012, էջ 29):

Ներկայումս Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը դարձել է բողոքի դրոշակակիրը եւ խորհրդանշիչը: Այն ո՛չ Հայաստանի 670 հանքերից առաջինն է, ո՛չ էլ ամենամեծը, բայց ինչպես իմ հարցվողները բացատրեցին, Թեղուտը խորհրդանշում եւ ամփոփում է Հայաստանում հանքարդյունաբերության շուրջ գոյություն ունեցող բոլոր բանավեճերն ու մտահոգությունները: Մի բնապահպան ակտիվիստ ինձ այն նկարագրեց որպես կենտրոնական կարեւորության «հիմնարար» խնդիր («ողնաշարային գործ»), ավելացնելով.

1915 թվականից հետո (Եղեռնը)⁸ վերապրած հայրերը ի վիճակի եղան վերաբնակեցնել երկիրը: Այսօր ոչնչացվում են շրջակա միջավայրը եւ ապրուստի միջոցները (հեղինակի հարցազրույցը, հոկտեմբերի 13, 2012թ.):

Այս տեսակետը կրկնում են ուրիշ հարցվողներ: Ինչպես մի ՀԿ-ի ներկայացուցիչ հարցվող ասաց.

Թեղուտը ներառում է այն ամենը, ինչ խնդրահարույց է Հայաստանի համար՝ կոռուպցիա, տնտեսական անարդարություն, հանքարդյունաբերության անարդար քաղաքականություն: Այս բոլորը, ինչպես նաեւ մարդու իրավունքների հարցերը, կարող են ամփոփվել Թեղուտի մեջ (հեղինակի հարցազրույցը, հոկտեմբերի 9, 2012թ.):

Իսկ ակտիվիստներից մեկն այսպես բացատրեց.

Թեղուտը վառ օրինակ է տնտեսական եւ սոցիալական անարդարության խնդիրների, կենսաբազմազանությանը եւ մարդու իրավունքներին սպառնացող վտանգների, էլ չխոսելով սեյսմիկ վտանգների մասին, որոնցով այն հղի է: Թեղուտի միջոցով մենք կարող ենք բացահայտել հանքարդյունաբերության ոլորտի բոլոր խնդրահարույց կետերը, բայց իհարկե, մեր ակտիվիզմը չի սահմանափակվում Թեղուտով (հեղինակի հարցազրույցը, հոկտեմբերի 12, 2012թ.):

2012 թվականի դեկտեմբերի 19-ի տարածված մամլո հաղորդագրությունում մեջբերված է Հայկական բնապահպանական ցանց ՀԿ-ի նախագահ Ուրտուլա Ղազարյանի խոսքը.

8. Ծանոթագրություն հեղինակի

Հայերն ամենուր բարձրաձայնում են Թեղուտի վերաբերյալ, քանի որ նրանում հյուսվում են մի քանի ժամանակակից խնդիրներ. իրավունքի գերակայություն, որոշումների կայացման թափանցիկություն, հանրային առողջության նկատառումներ և հանրության համար տեղեկատվության մատչելիություն: Թանկարժեք և սահմանափակ բնական ռեսուրսների անողորմ թալանը մի խումբ օտերերկրյա և հայ ներդրողների կարճաժամկետ ֆինանսական շահի համար թե՛ ողբերգական է, թե՛ սարսափելի: Չնայած, որ անկախ ՇՄԱԳ-ի վերաբերյալ կառավարությանը ուղղված մեր պահանջին ստացել ենք աղոտ պատասխան, մենք քաջալերվում ենք այս խնդրի վերաբերյալ աճող քաղաքացիական ներգրավվածությամբ, որին ականատես ենք թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում, և հուսով ենք, որ այն շարունակական կլինի (Armenian Environmental Network, 2012a):

Թեղուտ

Թեղուտի անտառը, որը վերջին կուսական անտառներից մեկն է Հայաստանում, գտնվում է Հայաստանի հյուսիս-արեւելյան մասում՝ Լոռու մարզում՝ անդրապարտային Դեբեդ գետի ավազանում: Անտառը հարուստ է բուսական և կենդանական աշխարհով՝ բույսերի 200 տեսակով, կաթնասունների 55 և թռչունների 86 տեսակով, սողունների 10 և երկկենցաղների 4 տեսակով: Այս բույսերից և կենդանիներից շատերը հազվագյուտ և վտանգված տեսակներ են: Վերը նշվածներից բույսերի 6 և կենդանիների 26 տեսակ գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում: Ամենամոտ գյուղերն են Թեղուտը և Շնողը, որոնց երկուսի բնակչությունը միասին կազմում է մոտ 3600 մարդ:

2001 թվականին Հայաստանի կառավարությունը «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությանը (ACP) տվեց Թեղուտի հանքավայրը շահագործելու 25 տարվա լիցենզիա: Իր մեծությամբ Թեղուտի հանքավայրը երկրի երկրորդ պղնձամոլիբդենային հանքավայրն է Քաջարանի հանքավայրից հետո, որը շահագործում է «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը»: Թեղուտում հանքարդյունաբերության համար հատկացված տարածքն ունի 1491 հա մակերես, որի 82%-ը (1232 հա) ծածկված է անտառով: Հողերը ձեռք են բերվել շատ ցածր գներով՝ 1 մ²- 38 դրամ (մոտ ԱՄՆ 10 ցենտ) («Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն»,

2013ա), եւ հանքարդյունաբերության նախագիծը նախատեսում է 357 հա անտառի համատարած հատում: Եթե հանքը շահագործվի, հանքարդյունահանման արդյունքում կառաջանա մոտ 500 միլիոն տոննա պղնձ (ծանր մետաղներից բաղկացած մեծապես թունավոր թափոններ) եւ 600 միլիոն տոննա այլ տեսակի թափոն, որոնք պետք է լցվեն Դուբանաձոր գետի կիրճը, որի հետեւանքը կլինի թունավոր թափոններով աղտոտված 214 հա տարածք:

Համաձայն հանրությանը հասանելի տեղեկությունների՝ «ACP»-ի բաժնետոմսերի 19,3%-ը պատկանում է Վալերի Մեժլումյանին, իսկ մնացած 80,7%-ի սեփականատերը, օֆշորային գրանցման պատճառով, մնում է չբացահայտված: Տեղեկատվությունը խիստ սահմանափակ է, եւ հասարակության մեջ շատ ենթադրություններ են արվում այն մասին, թե ինչպես եւ ում է տրվել Թեղուտի հանքի շահագործման լիցենզիան: Իրականում, այս հարցը վերաբերում է նաեւ մյուս բոլոր հանքավայրերին: Հաշվի առնելով, որ հանքերից շատերը գրանցված են օֆշորային գոտիներում, հանրությանը մատչելի տեղեկատվությունը սահմանափակ է, ինչը բազմաթիվ անպատասխան հարցեր է թողնում հանքերի սեփականատերերի ինքնության վերաբերյալ (Տես՝ Աղյուսակ 2, էջ 85):

Բացի հանքավայրերի սեփականության մասին տեղեկատվության բացակայությունից, կան լուրջ մտահոգություններ պատշաճ հանրային լուծման բացակայության եւ գոյություն ունեցող՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) որակի եւ անկախության վերաբերյալ: Օրինակ՝ Թեղուտի հանքավայրի համար 2004 թվականին ՇՄԱԳ-ը իրականացրել է Լեռնամետալուրգիայի ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերությանը (ՓԲԸ), որը պատկանում է «Վալեքս գրուպին»: Եթե հաշվի առնենք, որ Թեղուտի հանքարդյունահանման լիցենզիայի սեփականատերը «Վալեքս գրուպի» դուստրոնկարկություն «Արմենիան Զափր Բորգրամ» է, ապա, բնականաբար, հարցեր են առաջանում Լեռնամետալուրգիայի ինստիտուտի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման անկախության վերաբերյալ: Ավելին, հարցեր են առաջանում տնտեսական գնահատականների եւ շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունների վերաբերյալ՝ ներկայացված Լեռնամետալուրգիայի ինստիտուտի գնահատման մեջ, որտեղ, ինչպես կարելի է տեսնել, տնտեսական հաշվարկները «մեծապես թերագնահատված են, իսկ որոշ դեպքերում՝ կազմված ոչ ճշգրտորեն» (Armenian Environmental Network, 2012b): 2012 թվականի հոկտեմբերի 30-ին Հայաստանում եւ սփյուռքի տարբեր համայնքներում հիմնված

14 ՀԿ-ների դաշինքը նամակ ուղարկեց Նախագահ Սերժ Սարգսյանին եւ վարչապետ Տիգրան Սարգսյանին՝ պահանջելով անկախ ՇՄԱԳ «Թեղուտի հանքարդյունաբերական նախագծի» համար՝ պնդելով, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գոյություն ունեցող գնահատականը եւ հանրային իրազեկման պայմանները «լիովին սխալ են»: Նրանք ավելացնում են, որ արդեն իսկ անհատուցելի վնաս է հասցվել Թեղուտին եւ էլ ավելի մեծ վնաս կհասցվի տարածաշրջանին, եթե հանքարդյունաբերությունը շարունակվի:

Համատեղ նամակը պահանջում է նոր ՇՄԱԳ, որը ա) կհամապատասխանի տեղական եւ միջազգային օրենքներին, բ) կսահմանի եւ կներկայացնի Թեղուտի հանքավայրի շահագործման բնապահպանական ազդեցության գնահատման ճշգրիտ վերլուծություն, գ) կբարձրաձայնի Թեղուտի շահագործման դեպքում հանրային առողջության վրա հնարավոր ազդեցությունները, դ) հաշվի կառնի հանքավայրի շահագործման այլընտրանքային զարգացումը, ե) կվերականգնի մարդկանց վստահությունը եւ հավատը կառավարության նկատմամբ (Armenian Environmental Network, 2012a):

Կառավարությունը մերժեց այդ պահանջը՝ ասելով, որ ՇՄԱԳ-ը իրականացվել է «օրենքի շրջանակում», եւ դրա համար էլ նախագիծը հավանության է արժանացել: Ներկայումս «ACP»-ը «մեծ եռանդով տեղահանել է լեռը», որպեսզի հասնի հողի տակ գտնվող պղնձի եւ մոլիբդենի պաշարներին: Ընկերությունն արդեն վերացրել է Թեղուտի կուսական անտառի ընդարձակ հատվածներ, որպեսզի կառուցի վիթխարի պոչամբար՝ հանքաքարի մշակումից հետո մնացած թունավոր թափոնների համար (Armenian Environmental Network and Armenian Tree Project, 2012): 2013 թվականի հոկտեմբերի դրությամբ հանքը դեռ բացված չէ ամբողջական շահագործման համար: Այդուհանդերձ, շատ ակտիվիստներ հավատացած են, որ այն կբացվի առաջիկա ամիսներին:

Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը եւ
ընապահականական ակտիվիզմը Հայաստանում

ԹԵՂՈՒՏԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը

«Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը», որը ձևավորվեց 2007 թվականին, նպատակ ունի «պաշտպանել Թեղուտ եւ Շնող գյուղերի բնակիչների սեփականության, առողջ շրջակա միջավայրում ապրելու եւ արժանապատիվ աշխատանք ունենալու իրավունքերը»⁹ («Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն», 2013դ): «Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը» (ԹՊՁՆ) ամբողջովին բաղկացած է կամավորներից, չունի կուսակցական պատկանելություն, եւ, ինչպես վերկայքն է հստակեցնում, քաղաքացիական նախաձեռնությունը «չի հավակնում ձեռք բերել քաղաքական իշխանություն»:

ԹՊՁՆ-ը Թեղուտի հանքավայրի դեմ իր ընդդիմությունը ձեւակերպել է բնապահպանական, ինչպես նաեւ կառավարման հարցերի շուրջ: Ըստ խմբի մանիֆեստի՝ Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը առաջնորդվում է «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքներով՝ հանուն մարդու առողջ եւ արժանապատիվ կյանքի, սերունդների ազատության, ընդհանուր բարեկեցության եւ երջանիկ կյանքի»: Նրանք վկայակոչում են «համակարգային կոռուպցիան», «մեր բնական պաշարների անվերահսկելի գերշահագործումը ու դրանից ստացվող երկամուտները» եւ «եկամուտների անարդարացի բաշխումը»՝ որպես «սոցիալական անարդարության եւ զանգվածային արտագաղթի» հանգեցնող պատճառներ («Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն», 2012ա):

ԹՊՁՆ-ը բազմիցս կոչ է արել կառավարությանը՝ կենտրոնացնել իր ուշադրությունը բնապահպանական տեսանկյունից ավելի բարենպաստ եւ կայուն զարգացման նախագծեր ստեղծելու վրա: Իր նպատակներին հասնելու համար նախաձեռնությունը գործադրել է զանազան ռազմավարություններ. բողոքի ակցիաներ, ֆլեշ մոբեր, հեծանվային արշավներ, մշակութային իրադարձություններ (ինչպես համերգները), բոյկոտի ակցիաներ, ստորագրահավաքներ, գիտաժողովներ եւ բանակցություններ կառավարական պաշտոնյաների հետ: ԹՊՁՆ-ը ունի

9. Ճանադարություն խմբագրի. քննարկում հեղինակը օգտվել է Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնության պաշտոնական կայքի անգլերեն էջից, որը մասամբ տարբերվում է այստեղ և հաջորդիվ մեջբերված հայերեն էջի բովանդակությունից:

35-40 ակտիվ անդամ և մոտ 8000 հետեւորդ ֆեյսբուքի իր էջում: Թեեւ շատ ակցիաներում ներգրավված է աջակիցների հիմնական խումբը, տեղի են ունեցել նաեւ ավելի մեծ ակցիաներ, ինչպես, օրինակ, երբ 2012 թվականի հունվարին 150 մարդ մեկնեց Երեւանից Թեղուտ՝ բողոքելու հանքավայրի դեմ: 2013 թվականի սեպտեմբերին ԹՊՁ-ը Շնող գյուղում կազմակերպեց մեղրի տոնավաճառ՝ դրանով իսկ գյուղացիների համար ստեղծելով տեղում արտադրված մեղրը և այլ ապրանքներ վաճառելու հնարավորություն: Այս իրադարձության նպատակը «այլընտրանքային տնտեսության» հնարավորությունների ընդգծումն էր: 2012 թվականին ևս ԹՊՁ-ը կազմակերպել էր Շնողում և Թեղուտում արտադրված մոտ մեկ տոննա մեղրի վաճառք («Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն», 2013թ):

2007-ից ի վեր, ԹՊՁ-ը դարձավ կենտրոնական հանգույց մտահոգ քաղաքացիների համար՝ հանդիպելու միմյանց, հարցեր քննարկելու, օրենսդրության և ծրագրային քաղաքականությունների մասին ինքակրթվելու, ինչպես նաեւ կապեր ու ցանցեր հաստատելու համար: Այն նաեւ համախմբող հարթակ դարձավ այլ քաղաքացիական նախաձեռնությունների ստեղծման համար, և շատ մարդիկ, որոնք ակտիվորեն ներգրավված են (կամ էին) ԹՊՁ-ի մեջ, հետագայում ներգրավվեցին այլ քաղաքացիական նախաձեռնություններում, (ինչպես օրինակ «Պահպանենք Թռչկանի ջրվեժը», «Փրկենք Մաշտոցի պուրակը» և այլն) և (կամ) ստեղծեցին ավելի ֆորմալ հաստատություններ ու կառույցներ, ինչպես «Էկոդար» ՀԿ-ն, որոնց միջոցով նրանք կարող են միավորել և ընդլայնել իրենց ջանքերը:

Ակտիվիստների բազա ստեղծելուց բացի, ԹՊՁ-ն ազդեցիկ դեր խաղաց նաեւ ակցիաների և պրակտիկաների մշակման գործում, որոնք այնուհետեւ կիրառվեցին այլ նախաձեռնությունների կողմից: Օրինակ՝ այն առաջինն էր, որ իրականացրեց «Ֆլեշ մոբեր» կամ «սմարթ մոբեր»՝ ստեղծագործ ակցիաներ, որոնք մարդկանց խմբերի անակնկալ կուտակումներ են, ովքեր համախմբվում են կատարելու առերեսույթ աննպատակ գործողություններ, ինչպես պարելը, բանաստեղծություններ արտասանելը, իրենց հեծանիվները շրջանով քշելը, կամ փուչիկներ բաց թողնելը՝ որեւէ սոցիալական հարց հանրայնացնելու և դրա վրա ուշադրություն հրավիրելու նպատակով: Ապա այդ ակցիաները տեսագրվում են և տեղադրվում ՅուԹյուբում, Ֆեյսբուքում կամ զանգվածայնորեն տարածվում էլեկտրոնային նամակներով: ԹՊՁ-ը կազմակերպեց և իրականացրեց այս ստեղծագործ ակցիաները բողոքի ավելի ավանդական ձևերի հետ միասին՝

ներառյալ պիկետ-ակցիաները կառավարական շենքերի առաջ, նամակագրական քարոզարշավներն ու ստորագրահավաքները, ինչպես նաեւ իրավական, դատական գործողությունները:

Մինչ ակտիվիզմի ավելի ավանդական ձեւերը կարելու էր քաղաքականություն մշակողների ուշադրությանն արժանանալու եւ ծրագրային քաղաքականության շուրջ նրանց երկխոսության մեջ ներքաշելու տեսանկյունից, ավելի ստեղծագործ ակցիաները շատ օգտակար էին լրատվամիջոցների ուշադրությունը գրավելու եւ երիտասարդներին, որոնք համարում են այնպիսի գործունեությունը, ինչպես հեծանիվ թշելը եւ «Ֆլեշ մոբերը», միանգամայն գրավիչ, հետաքրքրելու եւ ակցիայի մասնակից դարձնելու համար: Բացի այս գործողություններից ԹՊՋՆ-ը աշխատել է ֆորմալ ՀԿ-ների հետ՝ ընդլայնելու սեփական գործունեության ազդեցությունը:

Համագործակցություն Հայաստանի ՀԿ-ների հետ

Աշխատելով Հայաստանի մի շարք ՀԿ-ների հետ՝ «Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը» մասնակցել է նաեւ դատավարությունների եւ միջազգային մարմիններին ուղղված բողոքարկումների: 2009 թվականին «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնը, «Էկոդար» եւ «Վանաձորի Հելսինկյան քաղաքական ասամբլեա» ՀԿ-ները բողոք ներկայացրին Հայաստանի վարչական դատարանին Հայաստանի կառավարության, Բնապահպանության նախարարության, Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության դեմ՝ վկայակոչելով սահմանադրության, ազգային, ինչպես նաեւ ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիոն օրենքների խախտումները: ՀԿ-ների արդարադատության մատչելիության հարցը արդեն երկու տարի դատական կարգով վիճարկվում է տարբեր առյուծակերպում: Վրճաբեկ դատարանը 2011 թվականի ապրիլի 1-ի իր վճռում հայտնել է, որ հասարակական կազմակերպությունը, անկախ իր կանոնադրական նպատակներից, չի կարող հավակնել այլ անձանց պաշտպանության («Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն», 2013q):

ԹՊՋՆ-ն նույն երեք ՀԿ-ների հետ միասին ավելի ուշ դիմեց Միավորված ազգերի Օրհուսի եւ Եսպոոյի համապատասխանության

կոմիտեներին՝ պնդելով, որ Թեղուտի հանքավայրի շահագործման լիցենզիան տրամադրելիս Հայաստանը խախտել է միջազգային իր պարտավորությունները: Մասնավորապես, նրանք մտահոգություն են հայտնում այն մասին, թե ինչպես հանքավայրի շահագործմանն առնչվող որոշումները ոտնահարել են Կոնվենցիայի մի շարք հիմնական պահանջներ, օրինակ, հանրային մասնակցության ապահովումն իրականացնելու հստակ, թափանցիկ և հետևողական շրջանակի պահանջը, ինչպես նաև որոշումների ընդունման գործընթացում հանրային մասնակցության պահանջը: Համաձայն «Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի» եզրակացությունների և հանձնարարականների՝ «...մասնակից կողմը ձախողել է հանրությանը վաղ փուլում շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշում կայացնելու և ժամանակին տեղեկացնելու գործում» (Hra.am, 2012թ.):

2012 թվականի հուլիսի 13-ին «Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը» բողոք ներկայացրեց ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին: Բողոքը ստորագրել էին 28 տեղական և միջազգային կազմակերպություն: Դիմումը ստորագրողները պահանջում էին համապատասխան հատուկ զեկուցողների «իրատապ այցելություն» Հայաստան, որպեսզի կատարվեր հետազա հետաքննություն և զեկուցվեր այս հարցի վերաբերյալ: Նրանք գրում են. «Խիստ անիրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ կանգնեցնելու ոչ կայուն և անպատասխանատու հանքարդյունաբերությունը, որ վտանգում է ընդամենը 29 000 քառ. կիլոմետր տարածք ունեցող փոքրիկ երկրի և նրա բնակչության գոյությունն ու բարեկեցությունը» («Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն», 2012թ): 2012 թվականի վերջին ՄԱԿ-ը կապվեց իր տեղական ներկայացուցչություններ հետ՝ սկսելու հատուկ զեկուցողներ պատվիրակելու գործընթացը:

2012 թվականի նոյեմբերի 3-ին ստվերային զեկույց ուղարկվեց Եվրամիությանը, որը փաստեր էր տրամադրում այն մասին, որ «Հայաստանի ներկա իշխանությունները որևէ առաջընթաց չեն արձանագրում, ինչպես պատշաճ, անկախ և արդյունավետ ներքին հանրային ֆինանսական վերահսկողության ապահովման հարցում, այնպես էլ այն պարտավորված գործողությունների իրականացման հարցում, որոնց նպատակն է հանրային ներքին ֆինանսական վերահսկողության քաղաքականությունների համապատասխանեցումը Եվրամիությունում առկա քաղաքականությանն ու պրակտիկային (Hetq, 2012b):

Բոլոր վերը նշվածները ԹԶՊՆ-ի և հայկական ՅԿ-ների համատեղ աշխատանքի փորձերի օրինակներ են՝ ուղղված իրենց ազդեցությունը ընդլայնելուն:

Քաղաքական կուսակցությունների դերը

ԹԶՊՆ-ը հաստատապես որդեգրել է ներառական դիրքորոշում քաղաքական կուսակցությունների նկատմամբ եւ չի միանում որեւէ մի կուսակցության հայացքներին կամ գաղափարախոսությանը: Սա արդյունք է թե՛ որպես հաստատապես արմատացած քաղաքացիական նախաձեռնություն մնալու ցանկության, թե՛ այն բանի, որ նախաձեռնության անդամներն ունեն տարբեր քաղաքական հայացքներ՝ ազատականից եւ ձախակողմյան սոցիալիստականից մինչեւ ազգայնական: Խուժքը ի՛նչ ակտիվորեն ձգտում է, ի՛նչ էլ հատուկ ջանքեր գործադրում որեւէ քաղաքական կուսակցության հետ հարաբերություններ հաստատելու կամ նրանից օգնություն ստանալու համար:

Մինչեւ բոլորովին վերջերս ընդդիմադիր քաղաքական կուսակցությունները, բացառությամբ սակավաթիվ անհատների, հիմնականում լուռ էին հանքարդյունաբերության հարցի վերաբերյալ: Նրանցից «Ժառանգություն» կուսակցության անդամ, Ազգային ժողովի պատգամավոր Չարուհի Փոստանյանը եղել է հանքարդյունաբերության ամենաբացահայտ բնագավառներից մեկը վերջին մի քանի տարիների ընթացքում: Նա հրապարակայնորեն խոսել է Թեղուտի եւ Կապանի հանքերի դեմ: 2012 թվականի նոյեմբերին նա գրավոր հայտարարություն նախաձեռնեց, որը հրապարակվեց Եվրոխորհրդի 2012 թվականի Խորհրդարանական վեհաժողովի լիագումար նիստում: Հայտարարությունը դատապարտում է այն, ինչ անվանում է «Թեղուտի՝ տեխնածին բնապահպանական աղետի ծրագիր» եւ պնդում, որ Հայաստանի կառավարությունը.

...խախտելով ստանձնած միջազգային պարտավորությունները՝ այդ թվում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Առաջին հոդվածը, Օրհուսի կոնվենցիան, ինչպես նաեւ Հայաստանի օրենսդրությունը՝ համայնքի գյուղատնտեսական նշանակության եւ մասնավոր սեփականություն հանդիսացող հողերը հանրային գերակա շահ ճանաչելով, սեփականատերերի եւ հանրության կամքին հակառակ, բռնազավթում է, փոխում

դրանց նշանակությունը եւ հազարավոր հեկտարներ վերածում հանքարդյունաբերական տարածքի, այդ թվում՝ նաեւ Թեղուտի հանքավայրը (Parliamentary Assembly of the Council of Europe, 2012):

Այլ քաղաքական գործիչների թվում կարելի է հիշատակել «Հայաստանի (սոցիալ-էկոլոգիական) կանաչների կուսակցության» նախագահ Արմենակ Դովլաթյանին, ով աջակցել է ակտիվիստների աշխատանքին:

Թեւ որւէ կերպ կապված չլինելով Թեղուտի քաղաքացիական նախաձեռնության աշխատանքներին, 2012 թվականի դեկտեմբերի 25-ին ժառանգություն կուսակցության առաջնորդ եւ այդ ժամանակ նախագահի թեկնածու Րաֆֆի Հովհաննիսյանը եւս մամուլի համար հայտարարություն արեց՝ պնդելով, թե «եկել է փոփոխությունների ժամանակը» եւ ավելացնելով, որ անհրաժեշտ է «քնապահականական օրենսգրքի եւ հարկման մեխանիզմների վերաճեակերպում՝ ապահովելու, որ ազգային հարստություններն այսուհետեւ շահագործվեն միմիայն հաշվի առնելով շրջակա միջավայրի եւ Հայաստանի քաղաքացու շահերը» (Hetq, 2012ա):

Այսպիսով՝ չնայած Հայաստանում հանքարդյունաբերության մասշտաբներին եւ ծավալին՝ քաղաքական կուսակցությունների մասնակցությունը եղել է ավելի քան նվազագույն: Բացառությամբ անհատ քաղաքական գործիչների ներգրավվածության դեպքերի՝ Հայաստանում չկա ավելի լայն քաղաքական ներգրավվածություն եւ հանրային բանավեճ: Նաեւ 2007–2012թթ. Թեղուտի հանքավայրի մասին լրատվամիջոցների լուսաբանման մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Թեղուտի շուրջ քննարկումը աճում է ընտրական շրջաններում և նվազում դրանցից հետո՝ մատնանշելով քաղաքական կուսակցությունների՝ խնդրում շարունակական ներգրավվածության բացակայությունը:

Կապեր սփյուռքի հետ

Այժմ Եվրոպայում եւ Հյուսիսային Ամերիկայում գտնվող սփյուռքի մի քանի համայնքներ եւս ներգրավված են Թեղուտի հարցի բարձրաձայնման գործում: 2012թ. Լոս Անջելեսում գտնվող «Հայ Յեղափոխական Դաշնակցության» «Շանթ» ուսանողական միությունը

կազմակերպեց «Դադարեցրեք ավերիչ հանքարդյունաբերությունը» հանրային միջոցառում, որտեղ հարց բարձրացվեց Հայաստանում կատարվող «անտառահատման եւ ավերիչ հանքարդյունաբերության պրակտիկաների մասին» եւ ընդգծեց «կրթության եւ ակտիվիզմի կարեւորությունը»՝ փաստելով, որ խնդիրը «հասել է իր կրիտիկական կետին» (ARF Shant Student Association, 2012): Լոս Անջելեսում 2013 թվականին հիմնվեց նաեւ «Կանաչ Հայաստան» բնապահպանական խումբը՝ նպատակ ունենալով բարձրացնել իրազեկվածությունը բնապահպանական հարցերի վերաբերյալ եւ գործնական ու հուսալի լուծումներ տալ բնապահպանական խնդիրներին (Green Armenia, 2013): Նույն տարի ժնեում (Շվեյցարիա) ստեղծվեց «Կառուցելով այլընտրանքային ապագա» շահույթ չհետապնդող կազմակերպությունը, որը նույնպես առաջ է քաշում Թեղուտին վերաբերող մտահոգություններ, բայց կազմակերպության դիրքորոշումը ենթադրում է կայունության հարցերի դիտարկում ավելի լայն շրջանակում:

Երգիչ Սերժ Թանկյանը եւս արդեն երկար ժամանակ է, ինչ Թեղուտի պաշտպան է: 2012 թվականին Թանկյանը թողարկեց 3 րոպե տեւողությամբ տեսանյութ, որտեղ քննարկում է Հայաստանում շրջակա միջավայրի վատթարացումը եւ դրան հասցված վնասները գլոբալ համատեքստում (Armenian Environmental Network, 2012): Այդ տեսանյութում նա ասում է.

Վայրի բնության եւ շրջակա միջավայրի ավերումն այլեւս չեն կարող արդարացվել առաջընթացի կամ բնական ռեսուրսների օգտագործման անվան տակ: Քաղաքակրթությունը քայլում է մի բարակ պարանով սեփական գոյատեւման եւ ամեն ինչի ավերման միջեւ: Հիմնվելով մեր պատմական անցյալի եւ ներկա աշխարհաքաղաքական իրողությունների վրա՝ սննդի, ջրի եւ էներգիայի հարցերում վստահությունը սեփական ուժերին չափազանց կարելու է: Վայրի բնության ավերումը եւ դրա արդյունքում ավելացող կարբոնային արտանետումները դեպի մթնոլորտ պայմաններ են ստեղծել գլոբալ տաքացման համար, ինչը խիստ սահմանափակում է մեր ինքնավստահությունը: Հանքարդյունաբերությունը դեմ է մեր ընդհանրական շահերին եւ որպես ժողովրդի, եւ պետության (Թանկյան 2012; տեսանյութը անգլերենով հասանելի է «Հայկական Բնապահպանական Ցանցի» կայքում 2012թ):

Հարկ է նշել, որ Հայաստանում կատարվող հանքարդյունաբերության դեմ ուղված ակտիվիզմը հայտնի չէ ամբողջ սփյուռքում այնպես,

ինչպես Արցախի կամ ցեղասպանության ճանաչման հարցը: Ավելին, սփյուռքում կան նաեւ անհատներ, որոնք սատարում են Հայաստանում հանքարդյունաբերությանը՝ ամենայն հավանականությամբ, պայմանավորված երկրի համար տնտեսական օգուտի ակնկալիքով: Օրինակ՝ Հայաստանում այժմ գործող մի շարք հանքարդյունաբերական կորպորացիաների ղեկավարների թվում (գործադիր կամ ոչ գործադիր) կան սփյուռքահայեր: Ամերիկահայ Վան Քրիքորյանը (Van Krikorian) «Գլոբալ գոլդ քորփորեյշնի» նախագահողը եւ գլխավոր գործադիր տնօրենն է: Այս ընկերությունը շահագործում է Գետիկի, Մարջանի եւ Թուխմանուկի հանքավայրերը: Քրիքորյանը, որը նաեւ Ամերիկայի հայկական համագումարի տնօրենների խորհրդի անդամ է (Global Gold Corp., 2013a), «Գլոբալ գոլդի» կազմի մեջ է մտել 2003 թվականին: Կանադահայ Հրաչ Ջաբրայանը 2013թ. ապրիլին դարձավ «Դինո գոլդ մայնինգ քոմփանի» ՓԲԸ-ի փոխնախագահը եւ գլխավոր կառավարիչ (Հայաստանի Հանրապետության առեւտրաարդյունաբերական պալատ, 2013թ.): Նախկինում Ջաբրայանը «Դինո գոլդ մայնինգի» վարչության տնօրենն էր (2011-2013թթ.): Ընկերությունը շահագործում է Կապանի մոտակայքում գտնվող Շահումյանի ոսկու հանքավայրը: 2013 թվականի մարտին Արմեն Սարգսյանը՝ Հայաստանի նախկին վարչապետը, որն այժմ բնակվում է Լոնդոնում, նշանակվեց «Լիդիան Ինթերնեշնլ» ՓԲԸ-ի ոչ գործադիր տնօրեն: Կազմակերպությունը զբաղվում է Հայաստանի հարավ-արեւելքում՝ Ջերմուկի մոտ գտնվող Ամուլսարի ոսկու հանքավայրի մշակմամբ (Lydian International, 2013b): Այն պահից, երբ նա վերանշանակվեց Միացյալ Թագավորությունում Հայաստանի դեսպան (նախկինում երկու անգամ եւս զբաղեցրել է այս պաշտոնը), դուրս եկավ Լիդիանի խորհրդի կազմից (Lydian International, 2013c):

Հանքարդյունաբերող ընկերությունները նկարագրում են իրենց գործունեությունը այն տեսանկյունից, որ վերջինս բերում է Հայաստանի տնտեսական զարգացմանը եւ ստեղծում աշխատատեղեր, ինչպես նաեւ ներդրումներ են կատարում երկրի ենթակառուցվածքների զարգացման մեջ (Lydian International, 2013a, Global Gold Corp., 2013b): Հայտնի սփյուռքահայերի ղեկավար դիրքերում նշանակելը կարող է քիչել նրանց «իմաստության ու գիտելիքի» վրա հիմնվելու մտադրությունից (Lydian International, 2013b), բայց դա կարող է ընկալվել նաեւ որպես փորձ՝ ամրապնդելու օտարերկրյա հանքարդյունահանող ընկերությունների լեգիտիմությունը եւ բարձրացնելու նրանց վարկը հայերի շրջանում:

Չնայած «Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնության» եւ ՀԿ-ների՝ այդ թվում՝ «Թրանսփարենսի ինթերնեշնլ

հակակոռուպցիոն կենտրոնի», «Էկոդարի» և «Վանաձորի Յելսինկյան բաղաբացիական ասամբլեայի», ինչպես նաև Հայաստանում եւ սփյուռքում գտնվող նրանց աջակիցների համաձայնեցված եւ համառ ջանքերին՝ Թեղուտի հանքավայրը գործարկելու աշխատանքները ընթանում են իրենց հունով:

2013 թվականի հունվարին հիմնվեց մի նոր խումբ՝ «Համահայկական բնապահպանական ճակատ» (ՀԲՃ), որի նպատակը «համահայկական ցանցի» ստեղծումն է Հայաստանում բնապահպանական իրադրության մշտադիտարկման եւ կայուն տնտեսական աճին ու սոցիալական արդարությանը օժանդակելու համար: Այն փորձում է դրան հասնել աշխարհով մեկ հայերի ակտիվ մասնակցությունը ներգրավելու միջոցով: Այս զեկույցը տպագրության հանձնելու պահին (2013թ. հոկտեմբեր) ՀԲՃ երեք անդամ այցելում են Միացյալ Նահանգների սփյուռքի տարբեր համայնքներ՝ Հայաստանում եւ Արցախում հանքարդյունաբերության սպառնալիքների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով: Դեռ շատ վաղ է ասելու՝ արդյոք նրանց ջանքերը կհանգեցնեն Հայաստանի բնապահպանական հարցերի շուրջ սփյուռքի ավելի մեծ ներգրավվածությանը եւ ակտիվիզմին: Այդուհանդերձ, ինչպես կքննարկեմ ստորեւ, ճիշտ չի լինի ասել, թե բաղաբացիական հասարակության այս խմբերի ջանքերը որևէ ազդեցություն չեն ունեցել:

Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը եւ
ընապահականական ակտիվիզմը Հայաստանում

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ. ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐ

Նվաճումներ

Եթե մենք դիտարկում ենք ուղղակի կամ հատուկ ազդեցությունները ծրագրային քաղաքականության մակարդակում, ապա կարող ենք արձանագրել մի շարք քաղաքացիական նախաձեռնությունների հաջողությունը, որոնց թվում են «Ժամանակավոր անաշխատունակ անձանց իրավունքների պաշտպանության», «Փրկենք Մոսկվա կինոթատրոնի ամառային դահլիճը», «Պահպանենք Թռչկանի ջրվեժը» և «Փրկենք Մաշտոցի պուրակը» նախաձեռնությունները: «Պահպանենք Թռչկանի ջրվեժը» նախաձեռնությունը (2011թ. հոկտեմբեր) հաջողության հասավ՝ դադարեցնելով նախատեսվող հիդրոէլեկտրոկայանի կառուցումը, որը կջրագրվեր ջրվեժը: Ակտիվիստների կողմից ջրվեժի շրջակայքը գրավելուց և զուգահեռաբար Երեւանում բողոքներ իրականացնելուց երկու շաբաթ անց վարչապետ Տիգրան Սարգսյանը 2011 թվականի նոյեմբերի 3-ին կասեցրեց հիդրոէլեկտրոկայանի շինարարությունը: Մինչև դեկտեմբերի 11-ը շինարարությունը վերջնականապես դադարեցվեց և Թռչկանի ջրվեժին տրվեց «պահպանվող» կարգավիճակ: Ինչ վերաբերում է Մաշտոցի պուրակին, ապա «Փրկենք Մաշտոցի պուրակը» քաղաքացիական նախաձեռնությունը, որը սկսվեց 2012 թվականի փետրվարին, ի վիճակի եղավ փրկել պուրակը՝ շքեղ կրպակներ կառուցելու նպատակով բետոնապատումից: Այս և այլ փոքր քաղաքացիական նախաձեռնությունների հաջողությունը կարելի է բացատրել այն փաստով, որ դրանք ուղղված են եղել շատ հատուկ թիրախների և մարտահրավեր չեն նետել այնպիսի տնտեսական նախագծերի, որտեղ հարցականի տակ են դրվում միլիարդավոր դոլարներ, ինչպես Թեղուտի դեպքում:

Այդուհանդերձ թեև «Փրկենք Թեղուտը» և այլ քաղաքացիական նախաձեռնություններ, որոնք քաղաքական տեսանկյունից ավելի զգայուն հարցեր են բարձրացնում, ինչպես բռնությունը և մահվան դեպքերը Հայաստանի բանակում (որոնք բարձրացրել է «Բանակն իրականում» նախաձեռնությունը), անկարող են եղել արձանագրել ծրագրային քաղաքականության մակարդակի կամ կառուցվածքային փոփոխություններ, միևնույն է բերել են այդ խնդիրները հասարակական ուշադրության և մանրագնին վերլուծության դաշտ: Հետևաբար, եթե մի կողմ ենք թողնում արդյունավետությանը միտված տրամաբանությունը և քննության ենք առնում ավելի ընդհանրացված ազդեցությունը, որ քաղաքացիական նախաձեռնությունները թողել են Հայաստանում, տեսնում ենք, որ այս նախաձեռնություններն իսկապես բարձրացրել են քաղաքացիների իրազեկվածությունը այս հարցերում:

եւ նրանց ձայն տվել: Հայաստանում եւ տարբեր երկրներում գտնվող հայկական սփյուռքի համայնքներում ավելի ու ավելի շատ մարդիկ են խոսում Թեղուտի մասին: Վերջերս՝ 2012 թվականի նոյեմբերին եւ 2013 թվականի ապրիլին, Հայաստանի ամերիկյան համալսարանի «Հակոբեան բնապահպանական կենտրոնը»¹⁰ կազմակերպեց երկու միջազգային գիտաժողով, որոնք դիտարկում էին հանքարդյունաբերությանն առնչվող հարցեր:

Մարտահրավերներ եւ խոչընդոտներ

Բացի այն անկներեւ փաստից, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները մարտահրավեր են նետում շատ հզոր բազմազգային կորպորացիաների աշխատանքին, որոնք օժանդակում են իշխանություն տիրապետողների եւ միջազգային ֆինանսական հաստատությունների (ինչպես Համաշխարհային բանկն ու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը) կողմից, առկա են այլ գործոններ, որոնք սահմանափակում են նրանց ազդեցությունը եւ հանրության մասնակցության ընդլայնումը: Չեկույցի այս հատվածը հենվում է Հայաստանով մեկ իրականացրած 16 ֆոկլուս խմբային հարցազրույցների վրա, որի ընթացքում մենք բացահայտել ենք ընդհանուր տարրեր մարդկանց դիրքորոշումներում և Հայաստանում տեղեկատվության մատչելիության հարցում:

Առաջին. վախը սահմանափակում է հանրության ավելի լայն մասնակցությունը քաղաքացիական նախաձեռնություններին: Վախի գործոնը, որը հատկապես ուժեղ է Երեւանից դուրս եւ երկրի հարավային մասում (Սյունիքի մարզ), խանգարում է մարդկանց միանալ այս խմբերին եւ բարձրաձայնել իրենց մտահոգությունները: Ֆոկլուս խմբերի բոլոր մասնակիցներին ասվել էր, որ քննարկումներն անանուն են, եւ նրանց անունները որեւէ տեղ չեն երեւալու: Անգամ այս դեպքում, որոշ քննարկումների վերջում մի քանի մասնակից հրաժարվեցին նշել իրենց անունը եւ ազգանունը՝ պատճառաբանելով, թե վախենում են, որ եթե այն, ինչ նրանք մեզ ասել են ֆոկլուս խմբում, տեղեկատվության արտահոսքի պատճառով հայտնի դառնա, նրանք կարող են կորցնել իրենց աշխատանքը:

10. Հայաստանի Ամերիկյան համալսարանի «Հակոբեան բնապահպանական կենտրոնը» «աջակցում է բնական միջավայրի պահպանմանն ու վերականգնմանը հետազոտությունների, կրթության և համայնքային աջակցության միջոցով: Կենտրոնի հետաքրքրության հիմնական տիրույթները ներառում են. բնական պայշարների կայուն կառավարում, կենսաբազմազանություն և պահպանություն, կառուցապատված տարածքների կանաչապատում, մաքուր էներգիա և էներգիայի արդյունավետություն, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիա և բնապահպանություն»:

Եթե դու խոսում ես մի բանի մասին, որը քեզ դուր չի գալիս, դու կորցնում ես աշխատանքը: Ահա հենց սա է Հայաստանը:

Կին, 18-30 տ., Ալավերդի

Հիմնարկն աշխատողներին ուղարկում է, որ գնան ակտիվիստների դեմ բողոքեն: Ու ես՝ ուզած, թե չուզած, գնում եմ: Եթե չգնամ, կկորցնեմ աշխատավարձս, նույնիսկ աշխատանքս: Եթե ես ուրիշ աշխատանք ունենամ, որ կարողանամ իմ կարիքները հոգալ, չեմ ուզենա, որ այս հանքերը աշխատեն իմ համայնքում:

Տղամարդ, 18-35 տ., Թեղուտ

Երկրորդ. թեեւ Երեւանում առաջ է եկել ակտիվիզմի գիտակցումը, ընդհանուր առմամբ Հայաստանում լայնորեն տարածված է անտարբերությունը, բացակայում է սեփականության եւ զորացված լինելու զգացումը:

Գիտե՞ք՝ ինչու ակտիվիզմը զանգվածային բնույթ չի կրում: Որովհետեւ այսօր Հայաստանի քաղաքացիների 70%-ը գոյության կռիվ է տալիս, նյութականի կռիվ է տալիս, ուղեղը միայն դրանով է զբաղված:

Կին, 36 եւ ավելի, Երեւան

Մենք գիտենք, որ ամեն դեպքում ոչ մի բան չի փոխվելու. դա ոչ քեզնից է կախված, ոչ էլ՝ մեզնից:

Տղամարդ, 18-30 տ., Թեղուտ

Գիտե՞ք ցավը որն է, որ բոլորս մտածում ենք, որ Հայաստանում մենք ապագա չունենք. երիտասարդության մեծ մասն այսպես է մտածում: Բոլորս կուզենայինք ապրել արտերկրում, ունենալ նորմալ կրթություն, մասնագիտական աճ, ապահով սոցիալական վիճակ:

Կին, 18-35 տ., Երեւան

Խնդիրը նաեւ բողոքի մշակույթի բացակայությունն է: Եթե Երեւանում վիճակը փոխվում է, գյուղական վայրերում մարդիկ մնում են պահպանողական: Հարցվողներից մեկն ասաց.

Ոչ ոք պաստառ չի վերցնի եւ չի բողոքի, որովհետեւ նախ մենք հայ ենք, մենք մի քիչ բարոյությունավորված ենք: Մի քիչ չե՛լաւ, հատկապէս գյուղերում:

Տղամարդ, 18-35 տ., Շնող

Բայց ինչպես վերը հիշատակված երեւանցի ակտիվիստներն ասացին, իրենք ոգեշնչվում են և իրենց դիտում են որպես իրենց իսկ համար ցանկալի փոփոխությունը բերողներ: Անձնական պատասխանատվության եւ տեր լինելու այս զգացումը աստիճանաբար ի հայտ է գալիս երկրի այլ մասերում եւս: Օրինակ՝ Գյումրիի ֆոկլուս խմբի մի երիտասարդ մասնակից ասաց.

Բոլորն ասում են, որ իրենցից ոչինչ չի կախված, եւ միայն քչերն են պատրաստ ինչ-որ բան անել: Ճիշտ չի ասել, թե քեզնից ոչինչ չի կախված: Եթե ամեն մարդ այդպես մտածի, մենք ոչինչ չենք ունենա: Ամեն ինչ, նույնիսկ պետական կառավարումը, սկսվում է անհատից, հետո ընտանիքից, քաղաքից եւ երկրից:

Տղամարդ, 18-35 տ., Գյումրի

Քաղաքացիական նախաձեռնությունների համար մարտահրավեր է տիրող անտարբերության եւ անգործության զգացման դեմ պայքար մղելը եւ ավելի լայնորեն տեղեկատվություն տարածելը: Հատկապես վերջինը մնում է դժվարին գործ, քանի որ քաղաքացիական հասարակությանն անմատչելի են հիմնական տեղեկատվամիջոցները: Գյուղական վայրերում ապրող շատ հայաստանցիների համար հեռուստատեսությունը մնում է տեղեկատվության առաջնային ձեւ, եւ այլ աղբյուրներից՝ այդ թվում բլոգներից եւ Ֆեյսբուքից ստացվող տեղեկատվությունը նրանց մատչելի չէ:

Երրորդ. մարդկանց գիտակցության մեջ փոխանակվում է շրջակա միջավայրը սեփական աշխատանքով: Հենց սա էր, որ սպանեց 1988 թվականի շարժումը, երբ բնապահպաններին դարձրին քավության նոխազ՝ չափից ավելի շատ շրջակա միջավայրի եւ անբավարար չափով մարդկանց տնտեսական կարիքների վրա կենտրոնացած լինելու համար: Ինչպես ավելի վաղ նշեցինք, «Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնության» ակտիվիստներն այժմ սկսել են փոքր զարգացման նախագծեր՝ կենտրոնանալով Թեղուտի եւ Շնողի բնակիչների արտադրած մեղրը, մուրաբաները եւ գործվածքները վաճառելու վրա: Այս ձեւով նրանք փորձում են ի ցույց դնել տնտեսական զարգացման այլընտրանքային ուղիներ: Այդուհանդերձ, դեռ շատ բան կա անելու, որպեսզի այս փոքր նախագծերը մեծանան և դառնան ավելի կենսունակ:

Քաղաքացիական նախաձեռնություններն աշխատում են քաջալերել եւ աջակցել պատասխանատվության եւ տեր լինելու աճող

զգացմանը եւ մատնանշում են զարգացման այլընտրանքային ուղիներ: Նրանք պնդում են, որ մարդիկ չպետք է սպասեն, որ «ուրիշները» գործեն իրենց փոխարեն: Նրանք ասում են մարդկանց. «Դուք քաղաքացիներ եք, դուք ձայն ունեք, օգտագործե՛ք այն»: Նրանք դա անում են՝ գործադրելով մարդկանց հետ իրենց համերաշխությունը որջ երկրով մեկ: Բայց ինչպես երեւանցի հայտնի ակտիվիստ Մարիամ Սուխուդյանն ասաց.

Մարդիկ անընդհատ զանգում են ինձ եւ ասում՝ այստեղ ծառ են կտրում կամ քանդում են այս կամ այն բակը: Ես ասում եմ նրանց, - «Լավ է, որ ահազանգում ես, բայց պարզապես մի զանգիր, դու կարող ես անձամբ բարձրաձայնել խնդիրների մասին: Իհարկե, ես կօգնեմ քեզ, բայց սա քո բակն է, քո համայնքը, քո զբոսայգին, և դու եւս պետք է գործողությունների դիմես» (հեղինակի հարցազրույցը սեպտեմբերի 18, 2011թ.):

Դեռ անելու շատ բան կա, բայց «Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնության» հետեւողականությունը լիովին վարձատրվեց այն իմաստով, որ այսօր՝ հարցի շուրջ հինգ տարի իրականացված քարոզարշավից հետո, Հայաստանում եւ աշխարհի տարբեր երկրներում գտնվող հայկական սփյուռքի բազմաթիվ համայնքներում Թեղուտի հարցը քննարկվում է ավելի լայնորեն: Բայց շատ քննադատներ պնդում են, որ քաղաքացիական նախաձեռնությունները հարմար են միայն նեղ շրջանակ ունեցող, տեղային նշանակության հարցեր բարձրացնելու համար եւ որ հաստատութենային (ինստիտուցիոնալ) զարգացման եւ փորձառության պակասությունը խանգարում է նրանց՝ հասնելու ավելի մեծ ազդեցության քաղաքականության մակարդակում եւ ունենալու ավելի լայն հանրային աջակցություն:

Մի ՀԿ-ի անդամ հարցվող ասաց. «Մինչեւ այժմ քաղաքացիական նախաձեռնությունները աշխատել են խիստ հատուկ («տոչընձի») հարցերի վրա: Նրանք չեն բարձրացնում համակարգային հարցեր, որոնք անհրաժեշտ է բարձրացնել: Այդ հարցերը բարձրացնելու համար անհրաժեշտ է քաղաքական շարժում կամ կուսակցություն» (հոկտեմբերի 10, 2012թ.): Մի գիտնական, որը սատարում էր «Մաշտոցի պուրակ» նախաձեռնությանը, ասաց.

Ազդեցությունը տեղի է ունենում «դեպքից դեպք» հիմքով: Բայց մասնակցությունը քաղաքականության իրականացմանը եւ ազ-

դեցությունը քաղաքականության մշակման վրա (սպասվող, այլ ոչ թե գոյություն ունեցող) պահանջում է ուրիշ տեսակի ճնշում: Այն պահանջում է ոչ միայն տեղական ակտիվիզմ տազնապ հնչեցնելու և դրոշներ բարձրացնելու համար, այլև կառուցվածքներ, որոնք կորոշեն այլընտրաբային ծրագրային քաղաքականությունները (հարցազրույց Սթայփոլ, Նոյեմբերի 25, 2012թ.):

Իրոք, մի բանի ՀԿ-ների, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ բնադատել են քաղաքացիական նախաձեռնություններին՝ քաղաքական կուսակցությունների հետ համագործակցել չցանկանալու համար: Մի հարցվող, որը սփյուռքում գործող քաղաքական կազմակերպության անդամ է, ասաց. «Երիտասարդների համար քաղաքացիական հասարակությունը սեփական գաղափարներն արտահայտելու միակ միջոցն է», ապա ավելացրեց.

*Նրանց հետ իմ տարակարծության պատճառը քաղաքացիական ակտիվիզմի և քաղաքական ակտիվիզմի միջև կապի բացակայությունն է: Հաստատված քաղաքական գիծը **ծայրահեղ անվստահությանը** է վերաբերվում քաղաքացիական ակտիվիստներին: Եւ սրա համար ես կմեղադրեմ երկու կողմերին էլ: Ես կմեղադրեմ հաստատված ընդդիմադիր քաղաքական կուսակցություններին այն բանի համար, որ նրանք բավարար ջանք չեն գործադրել՝ քաղաքացիական նախաձեռնությունների հետ երկխոսության ուղիներ բացելու և փորձ անելու նրանց հայացքներից ավելի շատ բան վերցնել: Միեւնույն ժամանակ, ես բնադատությունս կուղղեմ նաև քաղաքացիական ակտիվիստներին՝ շատ փակ լինելու համար: Նրանք շատ-շատ դեմ են, որ իրենց կապակցեն այս կամ այն կուսակցությանը: Նրանք չեն ուզում լինել **դաշնակցական**, նրանք չեն ուզում լինել **լեռնական**, նրանք չեն ուզում լինել **հանրապետական**, նրանք չեն ուզում լինել «որեւէ **բան-ական**», նրանք ուզում են լինել միայն այն, ինչ իրենց խնդիրն է, և վերջ: Ես դա համարում եմ հարգանքի արժանի այն առումով, որ նրանք պարզապես ցանկանում են իրենց ձեռքերը մաքուր պահել և չեն ուզում լինել պիտակավորված կամ դասակարգված: Բայց դա խաղում է նաև սահմանափակող առաստաղի դեր նրանց քաղաքականությունը փոխելու արդյունավետության տեսանկյունից (հարցազրույցը Սթայփի միջոցով Նոյեմբերի 23, 2012թ.) (ընդգծումը հեղինակի):*

Թեև քաղաքացիական ակտիվիստները ընդունում են, որ գուցե հասել են այսպես կոչված արդյունավետության «առաստաղին»,

բայցեւայնպէս նրանք զգուշանում են քաղաքական կուսակցությունների հետ սերտ առնչություններ ունենալուց, քանի որ վախենում են կոոպտացիայից (ակտիվիստների նվաճումները յուրացնելու իմաստով, ծան. խմբ.) եւ շահագործվելուց: Կոոպտացիայի այս վախն անհիմն չէ: 2013 թվականի նախագահական քարոզարշավի ժամանակ Սերժ Սարգսյանը փորձեց ներկայացնել ակտիվիստների հաղթանակը Մաշտոցի պուրակում որպէս իր սեփականը: Իր ընտրարշավի տեսահոլովակներից մեկում Սարգսյանը ներկայացված է որպէս քաղաքացիական հասարակության եւ քաղաքացիների իրավունքների պաշտպան այն առաջնորդի փոխարեն, ում կառավարման օրոք վարչական օլիգարխիական կապիտալիզմին թույլատրվեց հետեւողականորեն շարունակվել եւ ծավալվել: Բայց միայն նա չէր, որ փորձեց յուրացնել շարժման հաջողությունը՝ ժողովրդավարական կրեդիտներն ավելացնելու նպատակով: Ընդդիմադիր քաղաքական կուսակցություններն ու շարժումները եւս հայտարարեցին «Մաշտոցի պուրակի» հաջողության մեջ իրենց ներդրման մասին: Ինչպէս ասաց «Փրկենք Մաշտոցի պուրակը» քաղաքացիական նախաձեռնության ակտիվիստներից մեկը.

Քաղաքացիական ակտիվիզմի նկատմամբ ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների վերաբերմունքը շատ սպառնողական է: Նրանք ցանկանում են հասանելի դարձնել եւ օգուտ քաղել քաղաքացիական ակտիվիստների կուտակած քաղաքական եւ սոցիալական կապիտալից: Օրինակ՝ վերջերս տեսա մի տեսահոլովակ, որտեղ Նախախորհրդարանի ներկայացուցիչները պնդում են, որ ոչ միայն մասնակցել են պուրակի զարգացումներին, այլ «համակարգել» են այն: Համակարգել, հենց այդ բառն են օգտագործում: Բայց ես կարծում եմ, որ այդպիսի մոտեցումը քաղաքացիական նախաձեռնություններին խնդրահարույց է, որովհետեւ մենք անկախ ենք, եւ ասելով, թե համակարգում են մեզ, նրանք մոլորեցնում են մարդկանց: Ըստ իս, եթե դա է քաղաքական կուսակցությունների մոտեցումը, ապա ինչու մենք պետք է վստահենք նրանց (հեղինակի հարցազրույցը, ապրիլի 5, 2013թ.):

Մտահոգությունը, որ քաղաքական կուսակցությունները կօգտագործեն իրենց գործողությունները սեփական շահերի համար, անհանգըստացնում է շատ ակտիվիստների, բայց Թռչկանի եւ Մաշտոցի պուրակի քաղաքացիական նախաձեռնությունների հաջողությունից հետո ակտիվիստների շրջանում սկսեց առաջ գալ անհամաձայնություն այն

բանի վերաբերյալ, թե ինչպես պետք է ընդլայնվել (մեծացնել մասշտաբը) եւ թե արդյոք պետք է (այդ բանն անել) ընդլայնվել: Որոշ ակտիվիստներ կողմնակից են քաղաքական կուսակցությունների հետ դաշինքների ստեղծմանը, մինչդեռ ուրիշները պնդում են, որ դա կհանգեցնի կուսակցությունների կողմից կոռուպտացման եւ գործողությունների ապա-արմատականացման եւ փոխարենը հորդորում են հեռավորություն պահպանել քաղաքական կուսակցություններից:

Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը եւ
ընապահականական ակտիվիզմը Հայաստանում

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԲԱԼ ՊԱՏԿԵՐԸ

Հանքարդյունաբերությամբ զբաղվում են աշխարհի շատ երկրներում եւ դրա դեմ ուղղված սոցիալական մոբիլիզացումները գլոբալ երեւոյթ են: Յուրաքանչյուր երկրում, որտեղ երեւան են գալիս հանքարդյունահանող արդյունաբերություններ, հանքարդյունաբերական տնտեսության աճը «փոխում է ապրուստի միջոցների հեռանկարների կառուցվածքը՝ որոշ թվացյալ հնարավորություններով, որտեղ ուրիշները կորուստներ են տեսնում» (Bebbington et al., 2008b, էջ 2891): Հանքարդյունաբերության շուրջ բանավեճերը կենտրոնացել են այն բանի վրա, ինչ ոմանք անվանում են «պաշարների անեծք» կամ «հոլանդական հիվանդություն», պնդելով, որ օգտակար հանածոներով հարուստ երկրները «հետեողականորեն դոսեւորում են պակաս ակտիվություն», քան այդպիսի պաշարներ չունեցողները՝ ամենատարբեր տնտեսական եւ քաղաքական ցուցանիշներում՝ այդ թվում տնտեսական արդյունավետության, հմուտ կառավարման, եկամուտների անհավասարության եւ ժողովրդավարության հարցում (Weinthal and Luong, 2006): Իրոք, ուսումնասիրությունները համոզիչ կերպով ցույց են տալիս, որ օգտակար հանածոների վարձավճարներին ապավինելը սնում է հովանավորություն (պատրոնաժ), կլիենտելիզմ եւ կաշառակերություն (Auty et al., 2000), եւ որ հանքարդյունաբերությունը «մինչեւ օրս ունեցել է չնչին նվաճումներ աղքատության կրճատման գործում» (Pegg, 2006, էջ 376): Եզրակացությունները, որ կարելի է գտնել այս թեմային վերաբերող գրականության մեջ, հիմնականում վերաբերում են «հաստատությունների որակին» (Auty et al., 2000)՝ ցույց տալով, որ որոշ երկրներում թույլ հաստատությունները հնարավոր են դարձնում կոռուպցիա եւ նվազագույն վերահսկողություն հասարակության կողմից (Weinthal and Luong, 2006): Այնուհետեւ կատարվել են հետազոտություններ այն մասին, թե ինչպես են տեղային շարժումները ներթաշվում հանքարդյունաբերության դեմ ուղղված անդրազգային ակտիվիզմի մեջ, որտեղ ակտիվիստները ձգտում են «մեծացնել մասշտաբները» («jump scales») (Hurley and Ari, 2011, էջ 1398) եւ կապեր հաստատել իրենց սահմաններից դուրս գլոբալ ՀԿ-ների եւ շարժումների հետ, որպեսզի ուժեղացնեն իրենց ներգործման միջոցները սեփական երկրում (Keck and Sikkink, 1998, Tarrow, 2011): Նման բան Հայաստանում չի պատահել: Փոխարենը Հայաստանի քաղաքացիական նախաձեռնությունները փորձել են մեծացնել իրենց ներգործման հնարավորությունները եւ ազդեցությունը, ինչպես արդեն հիշատակվել է՝ կապեր ստեղծելով սփյուռքի հայության հետ: Ներկա պահին հայաստանյան քաղաքացիական նախաձեռնությունների եւ գլոբալ քաղաքացիական հասարակության կամ միջազգային բնապահպանական շարժումների

միջեւ կապեր չկան: Ինչպես ինձ ասաց «Փրկենք Մաշտոցի պուրակը քաղաքացիական նախաձեռնության» ակտիվիստներից մեկը.

*Եթե մենք փորձենք կապեր հաստատել զլորալ ընտանիքային
նախաձեռնության հետ, կառավարությունը կմեղադրի մեզ
«օտարների համար աշխատելու» մեջ: Ուստի՝ մեր միակ տար-
բերակը սփյուռքահայերի հետ աշխատելն է, քանի որ, թեեւ նրանք
ապրում են արտասահմանում, նրանք չեն համարվում «օտարներ»
(հեղինակի հարցազրույցը, հոկտեմբերի 9, 2012թ.):*

«Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությու-
նը», «Պահպանենք Թռչկանի ջրվեժը» եւ «Փրկենք Մաշտոցի պու-
րակը» քաղաքացիական նախաձեռնությունները մեծ օժանդակությու-
ն են ստանում տարբեր սփյուռքահայերի կողմից, որոնք ապրում
են Եվրոպայում եւ Հյուսիսային Ամերիկայում ու հետեւում բողոք-
ներին Ֆեյսբուքում եւ ՅուԹյուբում: Սփյուռքահայերը ստորագրել են
դիմումներ (պետիցիաներ), գրել են բաց նամակներ վարչապետին եւ
կառավարության ուրիշ պաշտոնյաների, այդ թվում՝ Սփյուռքի նախա-
րարին: Այսպիսի բաց նամակներից մեկում, որն ուղղված է Սփյուռքի
նախարար Հրանուշ Հակոբյանին, ասվում է.

*Յուրաքանչյուր երկրի զինված ուժերի ամենասրբազան պարտքն
ու պարտականությունն է պաշտպանել տվյալ երկրի սահմանները
եւ պահպանել նրա քաղաքացիների ապահովությունն ու անվը-
տանգությունը: Այն նրա համար չէ, որպեսզի վերահսկի, լռեցնի
կամ ահաբեկի անմեղ քաղաքացիներին, որոնք բողոքում են հան-
րային տարածքների անօրինական օգտագործման դեմ, ինչպես
Մաշտոցի պուրակը, Թեղուտի անտառը կամ երկրի պաշարների
անօրինական եւ հանցագործ շահագործումը, որը երկարաժամկետ
վնաս է հասցնում մեր հայրենիքի շրջակա միջավայրին (Misakyan,
2012):*

Հանքարդյունահանող ընկերությունները, որոնք բախվում են
ներքեւից ձեւավորված քաղաքացիական հասարակության դիմա-
դրությանը, հաճախ կապեր են հաստատում հանքավայրի հարակից
տարածքի բնակչության հետ՝ մարդկանց խոստանալով, որ նրանք
բոլորը կապահովվեն աշխատանքով, իրենց բաժինը կստանան
ընդերքի օգտագործման համար տրվող ռոյալթիներից եւ կունենան
նոր ենթակառուցվածք՝ որպես հանքարդյունաբերությանը բերած
իրենց աջակցության համար պարգևատրում (Kuecker, 2007, էջ 101):

Ավելին՝ նրանք վիճարկում են «պաշարների անեծքի» վարկածը՝ դրան հակադրելով «պաշարների նվիրատվություն» դրույթը, ըստ որի՝ հանքարդյունաբերությունը կարող է երկրին բերել տնտեսական աճ եւ օգուտներ: Այս բանը տեղի է ունենում նաեւ Հայաստանում, եւ չի կարելի հաշվի չառնել այն փաստը, որ հանքավայրերի հարեւանությամբ ապրող մարդկանց հաճախ գրավում են տնտեսական խթաններն ու օգուտները: Բայց բազմաթիվ գյուղացիներ, որոնց հետ մենք հարցազրույցներ ենք արել, նաեւ ասում են, որ նրանք կգերադասեն իրենց ապրուստի համար փող աշխատել ուրիշ ճանապարհներով, քան հանքարդյունաբերությունն է:

Ամբողջ աշխարհում հանքարդյունաբերությանն աջակցողները նաեւ պնդում են, որ ընդդիմանալ վերջինիս՝ նշանակում է որդեգրել «հակազարգացումային» դիրքորոշում, որը նրանք ընկալում են որպես «եսասիրություն եւ երեսպաշտություն» (Dougherty, 2011, էջ 415): Հայաստանում հանքարդյունաբերությանն աջակիցները նույնիսկ մեղադրում են ակտիվիստներին «օտարերկրյա ուժերի համար աշխատելու» մեջ: Օրինակ՝ «Դինո գոլդ մայնինգի» փոխնախագահ Հրաչ Զաբրայանը կանադահայ ակտիվիստ Սեւակ Հարությունյանին ուղղված բաց նամակում գրում է.

Մի տարվիր եւ մի դարձիր զոհն այդ «ակտիվիստների», ովքեր կատարում են օտարերկրյա կառավարությունների դրամաշնորհային ցանկությունները (Jabrayan, 2013):

Նմանօրինակ փաստարկները, որ փորձում են նկարագրել ամբողջ բնապահապանական ակտիվիզմը որպես «օտարների հրահանգների կատարում», հեշտությամբ անտեսում են այն փաստը, որ հաճախ հենց հանքարդյունաբերող ընկերությունների տերերն ու գործարկողներն են օտարերկրյա, բազմազգային կորպորացիաները եւ որ ներկա «հանքարդյունաբերության համար բարենպաստ» քաղաքականությունները Հայաստանում կատարելագործվել են «Համաշխարհային բանկի եւ եվրոպական փորձագետների օգնությամբ» (Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն, 2011թ.):

Հանքարդյունաբերությունից կախվածությունն իր հետ բերում է ռիսկեր, որոնց մի մասն արդեն քննարկվել է այս զեկույցում: Փաստերը վկայում են նաեւ, որ ամբողջ աշխարհում հանքարդյունաբերության տնտեսական օգուտները կարճաժամկետ են,

իսկ երկարաժամկետ հեռանկարում հանքարդյունաբերական համայնքները հայտնվում են ավելի վատ պայմաններում (Bebbington et al., 2008a): Հանքարդյունաբերությունը մեծապես կախված է ապրանքների գլոբալ գներից, եւ այստեղ անմիջապես զգացվում են 2008թ. գլոբալ տնտեսական ճգնաժամի նման իրադարձությունների հարուցած հետեւանքները: Մեկ տարի անց այն բանից հետո, երբ սկսվեց ներկա ճգնաժամը, 2009 թվականին, մետաղների գների գլոբալ անկման պատճառով Հայաստանի տնտեսությունը կրճատվեց ավելի քան 14%-ով, ինչը հանգեցրեց նրան, որ ժամանակավորապես դադարեցվեց որոշ հանքավայրերի շահագործումը, որպեսզի սահմանափակվեն ոչ շահութաբեր արտադրության պատճառած տնտեսական կորուստները (Armenian Tree Project and Zoi Environmental Network, 2012): Աշխարհի տարբեր երկրների մասին փաստերը եւս իր ցույց են դնում հանքարդյունաբերությանը՝ որպես տնտեսական աճի ռազմավարություն չափից ավելի ապավինելու ռիսկերը: Օրինակ՝ 1960-ականներին եւ 1970-ականներին Չամբիան ապրեց տնտեսական բում հիմնականում պղնձի եւ հումքի այլ տեսակների արտահանման շնորհիվ: 1970-ականների կեսին Չամբիան միջին եկամուտ ունեցող երկիր էր, «որը ուներ «ամբողջական» արդյունաբերացման (industrialization) եւ վերջին հաշվով «գարգացած աշխարհի» մաս ճանաչվելու հրաշալի հեռանկար» (Ferguson, 1999, էջ 6): 1969թ. Չամբիայի համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ոչ միայն ամենամեծերից մեկն էր Աֆրիկայում (երեք անգամ ավելի մեծ, քան Զենիայինը եւ երկու անգամ ավելի մեծ, քան Եգիպտոսինը), այլեւ նշանակալիորեն ավելի մեծ էր, քան Բրազիլիայինը, Մալայզիայինը, Հարավային Կորեայինը եւ Թուրքիայինը: Եթե այս թվարկված չորս երկրներն այսօր ծաղկում են, ապա Չամբիան «դուրս ընկավ ճանապարհից» 1980-ականներին համաշխարհային շուկայում պղնձի գնողունակության անկման պատճառով: Երկիրը, որը չափից ավելի մեծ կախվածության մեջ էր ընկել պղնձի արտահանումից, ծանր տնտեսական անկում ապրեց, որից այն դեռ պետք է ուշքի գա (Ferguson, 1999, էջ 7):

